ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զարգացման ծրագրի հիմքը
2. Առաքելությունը
3. Զարգացման ծրագրի նպատակներն ու խնդիրները
4. Տվյալներ դպրոցի մասին
5. ՈՒսումնական միջավայր, շենքային պայմաններ, նյութատեխնիկական բազա
6. Կառավարման և խորհրդակցական մարմինները, դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցություն
7. Մանկավարժական համակազմը
8. Աշակերտական համակազմը
9. Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ
   9.1 Համագործակցությունը կրթության կառավարման մարմինների հետ
   9.2 Համագործակցությունը համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ
   9.3 Համագործակցությունը ծնողական համայնքի հետ
   9.4 Համագործակցությունը շահառու կազմակերպությունների հետ
10. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակ
11. Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաներ, նորարարություններ
12. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում
   12.1 Հայրենասիրական դաստիարակություն
13. Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր
14. Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն
15. Բյուջետային հնարավորություններ
16. Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշները
17. Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում
18. Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները և վերահսկողությունը
19. Ակնկալվող արդյունքներ

# 1.ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»,

«Երեխայի իրավունքների մասին » օրենք,

Դպրոցի կանոնադրությունը

«Կրթության մասին օրենք»,

«Կրթության զարգացման պետական ծրագիր»

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք ,

Հանրակրթության պետական չափորոշիչ

«Նորմատիվ իրավականակտերի մասին» օրենք ,

Հանրակրթության պետական չափորոշիչ

ՀՀ կառավարության կողմից հաստատված առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը

Դպրոցի նախորդ 5 տարիների ձեռք բերած հաջողությունները, արձանագրված թերությունները

Ներքին գնահատման հաշվետվությունները

## 2. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագիրը մշակելիս առաջին հերթին անհրաժեշտ է ձևակերպել կամ հստակեցնել նրա առաքելությունը: Միայն դրանից հետո կարելի է որոշել հաստատության նպատակներն ու խնդիրները:

Դպրոցի առաքելությունը պահանջում է նախնական լուրջ հետազոտական աշխատանք:

Առաքելության ձևակերպման համար հաշվի եմ առել դպրոցի մանկավարժների, սովորողների և ծնողների կարծիքները, որոնք պատասխանել են հետևյալ հարցերին

- Ինչ կրթական կարիքներ է այն բավարարելու
- Ինչ նյութական ռեսուրսներ են առկա դրա համար
- Ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ, որպեսզի իրականացվի, և որքանով է դա իրատեսական:

Առաքելությունը ցանկալի ապագայի մտապատկերն է, որը ենթադրում է՝

1. Դպրոցը պետք է ստեղծի մեխանիզմներ կրթության որակի արդյունավետ կառավարման համար:
2. Դպրոցը պետք է ունենա իրենց գործին նվիրված համախոհների ուժեղ և միասնական թիմ, լավատես ու հայրենասեր որակյալ մասնագետներ:
3. Դպրոց բոլորի համար, դպրոց, որտեղ կարող են հաջողությամբ սովորել և՛ օժտված, և՛ սովորական երեխաները:
4. Օտար լեզուների խորացված ուսուցում, արտասահմանյան իր հասակակիցների հետ անմիջական շփումների միջոցով համաշխարհային մշակույթին ծանոթացում, հայրենասեր քաղաքացու ձևավորում:
5. Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի ձևավորում:

## 3. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Դպրոցը անձի կերտման դարբնոց է: Այստեղ են կերտվում համակեցության կանոններով ապրող, սոցիալական արդարության, հայրենասիրության, ուրիշի իրավունքի նկատմամբ հարգանք տածող, օրենքի գերակայությունը ընդունող քաղաքացիները:

Դպրոցի զարգացման ծրագիրը դպրոցի վարած քաղաքականության հիմքն է, Զարգացման ծրագիրը դպրոցի այսօրվա և վաղվա ուղեցույցն է, ապագայի տեսլականը: Այն պլանավորված գործողությունների և ներդրումների համախումբ է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների և խնդիրների իրագործմանը: Դպրոցն առաջնորդվում է իր զարգացման հեռանկարային ծրագրով և աշխատում է այնպես, որ հնարավորինս արդյունավետ և ժամանակին իրականացվեն նախատեսված աշխատանքներն ու միջոցառումները:

### ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐ

1. Ուսումնական ֆիզիկական միջավայրի ապահովում՝ ուսման առաջադիմության և որակի բարելավման համար

2. Արտադպրոցական , անհատական, համայնքային, միջազգային ծրագրերի ուղղորդում դեպի դպրոց 3. Տարեկան սահմանված աշխատանքային պլանների հետևողական իրականացում, կրթության որակի համապատասխանեցում ՀՊՉ ին

4. Դպրոցի կառավարման, ուսումնական գործի կազմակերպման նկատմամբ բոլոր օղակների պատասխանատվության բարձրացում

5. Պետության զարգացման համար գիտելիքով հարուստ և առողջ քաղաքացու ձևավորում

6. Պատրաստված և նորարարություններին մոտիվացված ուսուցչական թիմի կատարելագործում

7. Համայնքում որպես առաջադեմ դպրոցի ապահովում

8. Ուսումնական արդի միջավայրում նորարարական ինտերակտիվ մեթոդների կիրառում

9. Բազմակարծիք, ներառական, մասնակցային կրթության միջավայրի ապահովում

10. Կրթության շահառուների իրավունքների պաշտպանության բարձրացում

11. Գիտականորեն մրցունակ աշխատակիցների և սովորողների ապահովում և նրանց խրախուսում: 12. ՏՀՏ ոլորտի և նորարարությունների տեղեկացվածության կատարելագործում

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ուսումնական ֆիզիկական միջավայրը կատարելագործել, նպաստել կրթության շահառուների՝ աշակերտների և ուսուցիչների ուսումնառության և ուսուցման միջավայրը բարենպաստ դարձնելուն:

2. Համագործակցել վարչատնտեսական համակարգողի հետ և նպաստել լրացուցիչ ֆինանսների մուտքի ապահովմանը

3. Վերահսկելի դարձնել դպրոցի յուրաքանչյուր օղակի աշխատանքը՝ պահպանելով հաշվետվողականությունը և աշխատանքի թափանցիկությունը: Բոլորի ասելիքը լսելի դարձնել և թիմային որոշումներ կայացնել: Կատարելագործել դպրոց-ծնող-համայնք կապը:

4. Կազմակերպել աշակերտական ինքնակառավարման մարմինների գործունեության լավագույն մշակույթ:

5. Մանկավարժների համար կազմակերպել հանդիպումներ, ֆորումներ, հանդիպումներ՝ մեթոդական, ՏՀՏ, մասնագիտական , հասարակական, սոցիալական թեմաներով:

6. Մշտական համագործակցություն ապահովել համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ և օգտագործել նրանց ներուժը:

7. Յուրաքանչյուր աշխատակցի որակյալ և պատասխանատու աշխատանքի լավագույն արդյունքով ապահովել դպրոցի հեղինակությունը:

8. Կազմակերպել մեթոդական, ուսումնական քննարկումներ, վերլուծություններ, տալ գնահատականներ,խրախուսել և պատրաստել հաշվետվություններ:

9. Կազմակերպել երկարօրյա ուսուցում, որի կազմակերպումը կնպաստի ցածր առաջադիմություն ցույց տվող աշակերտների ուսման որակը բարձրացնելուն՝ համապատասխան ՀՊՉ-ի:

10. Բոլոր օլիմպիադաներին, մրցույթներին, և կազմակերպվող առաջնություններին ունենալ մասնակցություն:

11. Բարձրացնել կառավարման, վարչատնտեսական, ուսումնադաստիարակչական գործընթացում տեղեկատվական հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը:

12. Կատարելագործել դպրոցի կառավարչական գործունեությունը կանոնակարգող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՌԿԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

1. Հոգատար, հետևողական, դպրոցական խնդիրներին ինքնակամ լուծում տվող դպրոցասեր մարդիկ:

2. Հայրենասիրությամբ, հայ մշակույթի և հայեցի դաստիարակության ու կրթության ոգով տոգորված,ինքնակրթությամբ զբաղվող մանկավարժներ:

3. Ակտիվ, ապագայի նկատմամբ իրատեսական պատկերացում ունեցող աշակերտական համակազմ:

4. Դպրոցի նշանակությունը, նպատակներն իմացող և խնդիրներով զբաղվող համայնք:

5. Բարոյահոգեբանական կայուն ուսումնական միջավայր:

6. Ծրագրերի, թեմատիկ և օրվա դասի պլանների հետևողական կատարում:

7. ՏՀՏ գործիքներին տիրապետող, արդի մտածելակերպ ունեցող աշխատակիցներ, որոնք տիրապետում են էլեկտրոնային փաստաթղթերի /օրենքներ, կարգեր՝ կրթությանը առնչվող,Կանոնադրություն, ՀՊՉ , Լիցենզիա, տարիֆիկացիա, Ուսպլան, ՈՒԴԱՊ,ՆԴՎ պլանավորում, իրավական ակտեր,թեմատիկ պլաններ, ներքին և արտաքին գնահատումներ, վարչատնտեսական փաստաթղթեր և այլն …/ կազմման, համացանցում տեղադրման գործընթացներին:

18. ՏՀՏ գործիքների առկայություն, նորարարություններին ընդառաջ գնացող մանկավարժական և աշակերտական համակազմ:

19. Ֆինանսատնտեսական կայուն վիճակ

ՌԻՍԿԵՐԸ

1. Շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի ժամանակի պահանջին չհամապատասխանություն

2. Դպրոցի շահառուների կողմից կատարված աշխատանքների հաշվետվողականության մեխանիզմների անկատարություն

3. Դպրոցի կառավարմանը մասնակցող, խորհրդակցական մարմինների գործունեության հնարավոր բացասական ազդեցություններ: Քննարկումների ընթացքում նեղ անձնական, ընտանեկան, քաղաքացիական հարցերի առաջացում: Հասարակական գործերի նկատմամբ հետաքրքրության պակաս: Հասարակության արատավոր երևույթների արտացոլում դպրոցական կյանքում, ագրեսիվ վարքագիծ, ընտանիքում դաստիարակության պակաս

4. Դպրոցի վերահսկողությունն իրականացնող պետական մարմինների կողմից դպրոցի գործունեությանը հնարավոր բացասական միջամտություններ

5. Ծնողական համայնքի կողմից դպրոցական գործունեության մասնակցության պասիվություն

6. Ուսման և միջավայրի նկատմամբ սիրո և հոգատարության դաստիարակության խոչընդոտներ / հեռախոս, ՏՀՏ խաղեր, մոլորություններ և այլն/

7. Մանկավարժների ինքնազարգացմանը խանգարող սոցիալական խոչընդոտներ

8. Դպրոցի գործունեության վերաբերյալ համայնքում ձևավորված կարծրատիպեր

9. Դպրոցի աշխատանքային ակտիվ գործելակերպի մշակույթին չհարմարվողներ

10. Ուսումնառության արդյունքների նկատմամբ սովորողների, ուսուցիչների և ծնողների անտարբերություն

11. ՏՀՏ ծրագրերի ուսումնական և ժամանցային նպատակներով օգտագործման տարբերակման կարողության, մեդիագրագիտության թույլ մշակույթ սովորողների շրջանում

12. ՏՀՏ ծրագրերի իմացության և օգտագործման միջին կարողությունների պակաս ուսուցիչների որոշակի մասի մոտ

13. Պետական բյուջեի, դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ

Զարգացման ծրագիրը կազմել եմ ներքոհիշյալ ոլորտները վերլուծության ենթարկելով, նպատակադրելով, արդյունքների գնահատման և վերահսկողության մեխանիզմները մշակելով.

1. Դպրոցի շենքային պայմանները
2. Դպրոցի նյութատեխնիկական բազան
4. Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը և խորհրդակցական մարմինները
5. Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ
6. Դպրոցի ուսումնական միջավայրը Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրը Դպրոցում ազգային - մշակութային մթնոլորտի ձևավորման պայմաններ Դպրոցի սովորողների և աշխատողների առողջ ապրելակերպի, սոցիալական և բարոյահոգեբանական միջավայր
7. Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները
8. Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները
9. Դպրոցի տրամադրած կրթության որակը՝չափորոշչային պահանջներին համապատասխան
10. Դպրոցի կողմից օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաները և նորարարությունները
11. Ուսումնական նպատակով կատարված ծախսերը՝ դրանց արդյունավետության և ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

## 4.ՏՎՅԱԼՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

*Գյումրի 1988թ. դեկտեմբեր*

1988 թվականի դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցավ 9 բալ հզորությամբ ավերիչ երկրաշարժ; Այն ընդգրկեց Հանրապետության տարածքի 1/3 մասը՝մեկ միլիոն 130 հազար բնակչությամբ: Րոպեների ընթացքում լրիվ կամ մասնակի ավերվեցին Լենինականը, Սպիտակը, Կիրովականը, Ստեփանավանը, հարյուրից ավել ավաններ ու գյուղեր:

Աղետի լուրը Հայաստանի վրա բևեռեց համայն մարդկության ուշադրությունը:

Ավստրիան առաջիններից մեկն էր, որ արձագանքեց մեզ պատուհասած աղետին՝ **հատուկ թաղամաս կառուցելով հաշմանդամների համար, որը մինչև հիմա այդպես էլ կոչվում է՝ Ավստրիական թաղամաս: Ավստրիական թաղամասը** հետերկրաշարժյա առաջին կառույցն էր, որի շինարարությունն ավարտվեց 1990 թվականին; Բնակելիների հետ կառուցվեց նաև դպրոց, մանկապարտեզ, ամբուլատորիա, որոնք նախատեսված էին թաղամասի ազգաբնակչությանը սպասարկելու համար:

Գյումրու Ավստրիական թաղամասում երկրաշարժից հետո կառուցված դպրոցում այսօր սովորում են 290 աշակերտ, որոնք դպրոց են գալիս ոչ միայն թաղամասից, այլև հարակից թաղամասերից:

*Դպրոցի արտաքին տեսք*

# «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

**Հեռ.՝** +374 312 6-36-97

**Հասցե՝** ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ֆ. Վերֆելի հրապարակ 4

**Էլ. փոստ՝** gyumri40@schools.am

**Աշխատողներ՝** 40

**Կազմակերպա-իրավական տեսակը՝** ՊՈԱԿ

**Իրավաբանական տեսակը՝** Ոչ առևտրային

Տնօրեն ՝ Հայկ Հարությունյան

Իրականացնում է հիմնական կրթություն, որը հանդիսանում է պարտադիր կրթության երկրորդ մակարդակը և ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները:
Դպրոցի ստեղծման տարեթիվը՝ 1990, որպես միջնակարգ դպրոց
Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը՝ 1990թ.
Դպրոցի շենքի տիպը՝տիպային
Հարկայնությունը՝ 2 հարկանի
Ջեռուցման եղանակը՝ լոկալ ջեռուցման ցանց
Առանձնասենյակների թիվը՝ 4
Դասասենյակների թիվը՝ 9
Լաբորատորիա՝ 0
Առարկայական սենյակ /կաբինետ՝ 0
Նախնական զինպատրաստության՝ 0
Հրաձգարան՝ 0
Համակարգչային կաբինետ՝ 0
Ինտերնետ կապի առկայությունը՝ առկա է
Բացօթյա սպորտհրապարակ՝ 0
Մարզադահլիճ՝ 1
Գրադարանի ֆոնդը՝ 613 կտոր գիրք
Աշխատողների թիվը՝ 40
Դասարանների թիվը՝ 15
Աշակերտների թիվը՝ 290
ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը՝ 17

## 5.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ, ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ:

1. Ուսումնական հաստատության շենքը կարիք ունի մասնակի վերանորոգման:
2. Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված չէ, բայց անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:
3. Ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային զոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից,
4. Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:
5. Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավոր հավաքվում է հատուկ աղբարկղներում և դուրս է բերվում հաստատության տարածքից:
6. Ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ:
7. Ուսումնական հաստատության շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր:
8. Ուսումնական հաստատության շենքը մասնակի է հարմարեցված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ և այլն):
9. Ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:

10. Հաստատությունն ապահովված է անվտանգ լոկալ ջեռուցման համակարգով: Բոլոր դասասենյակներում, ինչպես նաև միջանցքներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, որոնք համապատասխանում են սանիտարական նորմերին: Ջեռուցման ամիսներին դիտարկման արդյունքները եղել են բավարար:
11. Ուսհաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով:
12. Ուսհաստատությունում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ տղաների և աղջիկների համար:
13. Ուսհաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և ապահովված են հիգիենայի պարագաներով (օճառով, թղթով և այլն):
14. Հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանհանգույց:
15. Ուսումնական հաստատությունում առկա չէ բուժկետ:
16. Դպրոցում նախակրթարան չի գործում:
17. Ուսումնական հաստատությունը չունի գործող և բավարար ֆիզիկական պայմաններով գրադարան, որը հագեցած լինի անհրաժեշտ ուսումնաօժանդակ գրականությամբ, որից կանոնավոր կերպով օգտվեն սովորողները, ուսուցիչները և վարչական կազմը:
18. Ուսումնական հաստատությունը չունի ուսումնական լաբորատորիաներ ու կաբինետներ, այդ թվում՝ (քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, ռազմագիտության, համակարգչային);
19. Չունի նիստերի ու միջոցառումների դահլիճ:

*Ուսուցչանոց*

Դասասենյակ

*Կաթսայատուն*

*Տվյալներ հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին*

| Ցուցանիշ | Տվյալներ |
|---|---|
| Գրադարանի տարածքը քմ-ով | 4 |
| Գրադարանում համակարգիչների թիվը | 0 |
| Գրադարանում ինտերնետին միացված համակարգչների թիվը | 0 |
| Գրադարանում/ընթերցասրահում նստատեղերի թիվը | 0 |
| Գրադարանային ֆոնդում առկա գրքերի /բացառել ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերը/ ընդհանուր թիվը, այդ թվում՝ | |
| -գեղարվեստական գրքերի թիվը | 577 |
| -տեղեկատվական գրքերի թիվը /բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն/ | 449 |
| -ուսումնամեթոդական գրքերի թիվը | 22 |
| -ամսագրերի թիվը | |
| Վերջին անգամ գրադարանային ֆոնդը նոր գրականությամբ համալրվելու ամսաթիվը | |
| Գրադարանից միջինում ամսեկան օգտվողների թիվը | **20** |
| **Պատասխանել այո կամ ոչ** | |
| Վերանորոգվա՞ծ է արդյոք գրադարանը | Ոչ |
| Անց կացվու՞մ են արդյոք գրադարանում դասեր և պարապմունքներ | Ոչ |
| Գրադարանավարն ունի՞ համապատասխան բարձրագույն կրթություն | Ոչ |
| Վերջին 3 տարվա ընթացքում գրադարանավարն անցե՞լ է վերապատրաստում գրադարանային աշխատանքի ուղղությամբ | Ոչ |
| Գրադարանը հանդիսանու՞մ է հանրապետության, այլ երկրների կամ կազմակերպությունների գրադարանների բաժանորդ և օգտվում է արդյոք նրանց ռեսուրսներից | Ոչ |
| Գրադարանն ունի՞ էլեկտրոնային ռեսուսներ, որքան | Ոչ |
| Սովորողները կարո՞ղ են ինքնուրույն ու ազատ մոտենալ գրադարանի գրադարակներին/պահարաններին, ընտրել իրենց անհրաժեշտ գրականությունը և վերցնել այն ընթերցասրահում աշխատելու ժամանակ | Ոչ |
| Գրադարանն ունի՞ այն գրքերը, որոնք ամենից հաճախ են ցանկանում վերցել սովորողները | Այո |
| Գրադրանն ունի՞ գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագիր | Ոչ |
| Գրադանավարը կարողանո՞ւմ է օգտվել գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագրից | ոչ |

Գրադարան որպես այդպիսին գոյություն չունի, գրքերը դասավորված են ֆիզկուլտուրայի դահլիճի հանդերձարաններից մեկում:

*Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ*

| Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ | Տարածքը (քմ) | Վերանորոգման կարիքը | Առկա գույքը, լաբորատոր սարքավորումներ ըպարագաները (թվարկել հիմնականը և նշել քանակները) | Ուսումնա-նյութական, ուսումնա-դիդակտիկ նյութերը | Լրացուցիչ, գույքի, սարքա վորումների, պարագաներ ի նյութերի կարիքը |
|---|---|---|---|---|---|
| կաբինետ | - | - | 9 համակարգիչ, որից 6 գործող, բազմաֆունկցիոնալ տպիչ-1, պատճենահանման սարք-1 | առարկայական սկավառակներ | ***Կա*** |
| Սպորտդահլիճ | 380,97 | մասնակի | կահավորված է | | ***Կա*** |

- Դպրոցը չունի նիստերի դահլիճ: Միջոցառումներն անցկացվում են միջանցքում;
- Չկա ուսուցչանոց և ծանր աշխատանքի ընդմիջումներին ուսուցիչը տեղ չունի նստելու, հանգստանալու, տետրեր ստուգելու, քննարկումներ իրականացնելու: Իմ դիտարկման պահին ուսուցիչները նստած էին միջանցքում և պատրաստվում էին դասի: Հիմնականում սա է պատճառը, երբ ուսուցիչներից ոմանք հարցման արդյունքում նշել էին, որ հաճույքով չեն գալիս աշխատանքի:
- Աշակերտներից շատերը նույնպես դժգոհել էին միջանցքների փոքրությունից, դասամիջոցները դասարանում անցկացնելուց:

*Սպորտդահլիճ*

*Սպորտդահլիճ*

Դպրոցի սպորտդահլիճն ու կտուրն ունեն մասնակի վերանորոգման, մարզագույքով համալրման կարիք:

***Տվյալներ ուսումնական հաստատությունում սննդի կետի առկայության և սննդի կազմակերպման վերաբերյալ***

| **Հաստատությունում առկա է սննդի կետ, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը)** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Այո | | | Ոչ | | |
| Հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը) | | | | | |
| Այո | | | Ոչ | | |
| Նկարագրել սննդի կետի սանիտարական վիճակը՝ ըստ հակահամաճարակային ծառայության | | | | | |
| Սննդի կետի տեսակը (բուֆետ, ճաշարան ) | Միաժամանակ սնվելու հնարավորություն ունեցող անձնաց թիվը և տարածքը (քմ) | Սառը և տաք հոսող ջրի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Տաք սննդի հնարավորությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Վերանորոգված է, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը) |
| Ճաշարան | 28 աշակերտ, 20,40քմ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ |

Ճաշարանն ունի շուրջօրյա ջրամատակարարում, գազամատակարարում, սառնարան, կահույք, գազօջախ:

Ճաշարանի սանիտարական վիճակը գերազանց է:

Հաստատության I-IV դասարանի աշակերտները օգտվում են «Տաք սնունդ» ծրագրից:

*Ռեսուրս-սենյակ*

ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքը հիմնականում տարվում է խաղերի միջոցով, և դպրոցում իրենց համար նախատեսված ռեսուրս-սենյակը շատ փոքր է, ինչը հնարավորություն չի տալիս արդյունավետ աշխատանքի: Մյուս խնդիրը՝ դիդակտիկ նյութերը կարիք ունեն թարմացման:

*Հարմարեցված սանհանգույց*

***Հաստատության նախագծային հզորությունը նկարագրող ցուցանիշներ և չափանիշներ***

Կրթական ծրագրերի իրականացումը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է: Այսինքն դպրոցներն այդպիսի ծրագրեր իրականացնելու նամար պետք ունենան համապատասխան լիցեզիա, ընդ որում՝ առկա յուրաքանչյուր ծրագրի համար: Այսինքն՝ թե տարրական, թե հիմնական և թե միջնակարգ կրթություն տրամադրելու համար անհրաժեշտ է ստանալ առանձին լիցենզիա: Դպրոցի լիզենզիաներն ուսումնասիրելիս առնչվեցի մի շարք խնդիրների

- Ուսումնական հաստատությունում սովորողների թիվը չի համապատասխանում հաստատության նախագծային հզորությանը և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:
- Հաստատության լիցեզիան սահմանում է 180 սովորողի համար սահմանային տեղեր:

Ինչպես նաև՝

- Դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը չեն համապատասխանում առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին:

## ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՆՊԱՏԱԿ

Յուրաքանչյուր սովորողի կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունը և ֆիզիկական մատչելիությունն ապահովող հարմարեցված միջավայրի բարելավում:

ԽՆԴԻՐ

Ապահովել շենքային բավարար ֆիզիկական պայմաններ, սովորողների կրթական կարիքների իրացման գործը նպատակին հասցնելու համար:

Վերլուծելով և ամփոփելով արդյունքները՝պարզվում է, որ **հիմնախնդիրներից կարևորագույնը դպրոցի տարածքի մեծացումն է**:

Դպրոցին **«Գյումրու Միջազգային Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ** <<Ավստրիական>> թաղամասի մասնաշենքի մի մասը հատկացնելու գործընթացի ձեռնարկում, քանզի այդ մասնաշենքը չի գործում լիարժեք ծանրաբեռնվածությամբ:

Տարածքը մեծացնելու արդյունքում ինքնըստինքյան կլուծվեն վերևում նշված շատ խնդիրներ, որոնց առաջացման հիմնական պատճառը համապատասխան տարածք չունենալն էր:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ուսումնական բարեկեցիկ, անվտանգ միջավայրի ապահովում:

ՌԻՍԿԵՐ

Ֆինանսական միջոցների պակաս:

ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համագործակցել հովանավորների, դոնոր կազմակերպությունների հետ:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հողային մեծ, ազատ, մաքուր տարածք:

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1. Պահպանել շենքի և տարածքի անվտանգ շահագործումը. | Տնօրենություն | 2023- 2028թթ | նախագիծ, ծրագիր | Պետական բյուջե |
| 2. Հետևողական լինել համակարգող – հաշվապահ , համակարգող սպասարկող անձնակազմ փոխհարաբերություններում | տնօրեն | | | |
| 3. Օգնել վերլուծելու դպրոցի եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը ըստ նախորդող տարիների համեմատելով ուսման որակի հետ | տնօրեն | 2023- 2028թթ | | |
| 4. Նկարագրել տարբեր ոլորտներում անհրաժեշտ աշխատանքը, նպատակը, գործողությունները, ծախսերը, առկա ռեսուրսները, անհրաժեշտ ռեսուրսները, ռիսկերը և ներկայացնել համակարգողին | տնօրեն | 2023- 2028թթ | | |
| 5. Հետևել պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումների կատարմանը | տնօրեն | 2023- 2028թթ | | |
| 6. Աջակցել համակարգողին ՝ գտնելու պետական ծրագրերով դպրոցի կողմից շենքային պայմանների բարելավմանն ուղղված կապիտալ ծախսերի ավելացմանը: | տնօրեն | 2023- 2028թթ | | արտաբյուջե, իրավաբանական անձանց երաշխավորված դրամական հատկացումներ, ոչ կառավարական կազմակերպությունների նյութական ու ֆինանսական միջոցներ |
| 7. Փնտրել հովանավոր դպրոցի բոլոր տարիների շրջանավարտների մեջ մշակված, կահավորված լաբորատորիաներ ստեղծելու համար | տնօրեն | 2023- 2028թթ | բարերարներ, արտաբյուջետային միջոցներ | |
| 8.Նպաստել լաբորատորիաների, կաբինետների, գրադարանի ստեղծմանը | տնօրեն | | | |
| 10.Դիմել վարչատնտեսական համակարգողին շին աշխատանքներ տանել դասասենյակների հնամաշ դռները եվրոդռներով փոխարինելու համար: | տնօրեն | | | |
| 11. Դպրոցին նոր մասնաշենքկամ լրացուցիչ տարածք հատկացնելու գործընթացի ձեռնարկում | | | տնօրեն<br>լիազոր մարմին | |

## ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՆՊԱՏԱԿ

Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ֆիզիկական միջավայրի և նյութատեխնիկական բազայի ապահովում

ԽՆԴԻՐ

Դպրոցի նյութատեխնիկական բազան համալրել ժամանակի պահանջին համապատասխան ուսումնական գույքով և նյութերով՝ ուսման որակը բարձրացնելու նպատակով

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ուսուցման որակի և ուսման նկատմամբ հետաքրքրության և սպասելիքների առաջացում

ՌԻՍԿԵՐ

Ֆինանսական միջոցների պակաս

ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաճախակի հանդիպումների կազմակերպում համայնքի ներկայացուցիչների հետ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական մեծ հնարավորություններ ունեցող շրջանավարտներ

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1.Համակարգողին ներկայացնել անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաների պահանջարկը | տնօրեն | 2023- 2028թթ | նախագիծ, ծրագիր | Պետական բյուջե |
| 2.Կահավորել դասարանները, լաբորատորիաները, կաբինետները | ուսուցիչներ, լաբորանտ | 2023- 2028թթ | | |
| 3. Նորոգել և ձեռք բերել նոր սերնդի համակարգիչներ, պրոյեկտորներ: Համալրել լինգաֆոնային դասասենյակը գույքով և տեխնիկայով: Լաբորատորիաները պարբերաբար համալրել նյութերով: | տնօրեն, ուսուցիչներ, լաբորանտ վարչատնտեսական համակարգող | 2023- 2028թթ | շահագրգիռ մարդկային ռեսուրսներ բարի կամք | ընթացիկ վերանորոգման և գույքի ձեռքբերման միջոցներ, հովանավորների միջոցներ |
| 4.Գրադարանը պարբերաբար համալրել անհրաժեշտ գրականությամբ: | ծնողներ, դասղեկներ, աշակերտներ | 2023- 2028թթ | շահագրգիռ մարդկային ռեսուրսների բարի կամք | |

### *ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ*

4 (գերազանց) նախատեսված գույքը ձեռք է բերվել ամբողջությամբ

3( լավ) նախատեսված գույքը ձեռք է բերվել մասնակի՝ 60%-ի չափով

2(բավարար) նախատեսված գույքը ձեռք է բերվել մասնակի՝ 30%-ի չափով

1 (անբավարար) նախատեսված գույքը ձեռք չի բերվել

***Առողջ և ապահով դպրոցական միջավայր***

4 (գերազանց) աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով

3( լավ) աշխատանքները կատարվել են մասնակի՝ մոտ 60%-ի չափով

2(բավարար) աշխատանքները կատարվել են մասնակի՝ մոտ 30%-ի չափով

1 (անբավարար) նախատեսված աշխատանքները չեն իրականացվել:

Ուսումնական հաստատությունը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը

***Վերահսկողության մեխանիզմներ***՝ մշտադիտարկում

***Վերահսկող***՝ տնօրենություն, համակարգող

***Ցուցիչ***՝ ՈՒԴԱ հաշվետվություն,ՆԳ հաշվետվություն

## 6.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Դպրոցի կառավարման որակը բարձրացնելու համար հարկավոր է խթանել դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը: Անհարաժեշտ է զարգացնել կրթական գործընթացի մասնակիցների՝ սովորողի, ծնողի, մանկավարժական աշխատողների գործունեությունը, բարձրացնել նրանց դերը՝ անցնելով ժողովրդավար, մասնակցային, թափանցիկ կառավարման:

ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցի կառավարման խորհրդի նիստերում քննարկվել և հաստատվել են տարեկան եռամսյակային ծախսերի նախահաշվային նախագծերը՝ հաշվի առնելով ծախսային նախագծերի վերաբերյալ բոլոր կարծիքներն ու առաջարկությունները: Կառավարման խորհրդում լսվել և հավանության է արժանացել տարիֆիկացիոն հանձնաժողովի կողմից կազմված տարեֆիկացիան և ուսումնական պլանը, ինչպես նաև հաստիքացուցակը: Խորհուրդը լսել է տնօրենի և հաշվապահի զեկուցումները դրամական միջոցների հոսքի և փաստացի ծախսերի,շահույթի բաշխման ուղղությունների և չափի մասին:

Կառավարման խորհուրդը աշխատել է արդյունավետ՝ նպաստելով կրթական գործընթացի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: Դպրոցը գործում է բաց և թափանցիկ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մանկավարժական խորհուրդը բաղկացած է 23 անդամից : Ըստ գործող կարգի հավանություն է տվել տարեկան աշխատանքային պլանին, ուսումնական պլանին, դասաբաշխմանը:

Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները : Նիստերը հիմնականում գումարվել են բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկել է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադարձել է ընթացիկ հարցերին: հավանություն է տալիս տարեկան աշխատանքային պլանին, ուսումնական պլանին, դասաբաշխմանը: Շատ հաճախ մանկավարժական խորհուրդը պարզապես հաստատում է տնօրենի առաջարկած

նախագիծը՝ երբեմն դրան համաձայն չլինելով հանդերձ: Դա համարում են անիմաստ միջամտություն, որովհետև նրանց կարծիքով դպրոցի տնօրենը, միևնույն է, իր առաջարկությունն է պնդելու: Այստեղ խնդիրը դպրոցի տնօրենի կողմից օրենսդրական պահանջները չներկայացնելն է:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշակերտական խորհուրդն ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը:Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս առաջարկություններով, կազմակերպում է միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական այցեր: Նախաձեռնությունների մասին տեղեկատվությունն ու կատարած աշխատանքը լուսաբանում են դպրոցի ֆեյսբուքյան էջում: Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին:

Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ծնողական խորհուրդը ձևավորված է կարգի պահանջներին համապատասխան: մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպել է բազում ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և այլ միջոցառումներ: Ծնողների հետ համագործակցությունը շարունակվել է նաև համավարակի պայմաններում: Նրանց հետ կապն իրականացվել է առցանց՝ սոցիալական տարբեր հարթակներում:

***Դպրոցում ձևավորված առարկայական մեթոդական միավորմները երեքն են՝պատմաբանասիրական, բնագիտամաթեմատիկական և տարրական:***

Առարկայական մասնախմբերի նախագահները ինչպես կարգն է կազմակերպում են նիստեր , սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ:

Առարկայական մասնախմբերը չեն համագործակցում հարևան դպրոցների մ/մների հետ:

Դպրոցը չունի ***հոգաբարձուների խորհուրդ:***

Խորհրդակցական մարմինների կողմից իրենց գործառույթների հստակ իրականացման, կանոնակարգման, միմյանց միջև արդյունավետ համագործակցության, արտաքին կապերի ստեղծման փորձի պակաս է նկատվում:

Ցանկացած կառավարում, այդ թվում նաև դպրոցի կառավարումը, ունի իր օրինաչափությունները, առանձնահատկություններն ու սկզբունքները: Կառավարումը , ինչպես ցանկացած գործունեություն, հիմնվում է մի շարք սկզբունքների և մեթոդների ապահովման վրա: Կառավարման սկզբունքները համարվում են կարևորագույն կատեգորիաներ, որոնք միաժամանակ ունեն և օբյեկտիվ , և սուբյեկտիվ բնույթ,ինչը պահանջում է ղեկավարից լուրջ, կշռադատված վերաբերմունք: Դպրոցի կառավարման սկզբունքները ճկուն են և փոփոխական՝ կապված կազմակերպության կառուցվածքի, տեսակի, նպատակների, գործողությունների, կոլեկտիվի կազմի և այլ հանգամանքների հետ: Կառավարման սկզբունքները բխում են պետության կրթական քաղաքականությունից և պայմանավորված են դպրոցների

յուրահատկությամբ: Դպրոցի ճիշտ կառավարման սկզբունքների հիմքում պետք է լինեն մանկավարժական համակարգի ժողովրդավարացումը, մարդասիրական ղեկավարումը, համակարգվածությունը, մանկավարժների գիտական նվաճումների, առաջավոր փորձի ներդրումը, գործողությունների համաձայնեցվածությունը, կարգապահությունը, աշխատանքների կենտրոնացումը, մանկավարժական կոլեկտիվի հաստատուն կազմը, նախաձեռնությունը, նպատակների ընդհանրությունը, ղեկավարման միասնությունը, կառավարող սուբյեկտի կողմից իր հնարավորությունների և փորձի հաշվառումը, ուսումնական ծրագրերի ու պլանների նկատմամբ միասնական պահանջները և այլն:

ՆՊԱՏԱԿ

Կառավարման խորհրդի դերի բարձրացում

Ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները

ՌԻՍԿԵՐ

Ոչ արդյունավետ համագործակցություն, սխալ որոշումների ընդունում

ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ

Կատարել կարգին համապատասխան դպրոցավարություն

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կառավարման խորհրդի և տնօրենի ակտիվ համագործակցություն

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1.Կրթության պետական կառավարման լիազորված մարմնին առաջարկություններ ներկայացնել դպրոցի զարգացման վերաբերյալ<br>2.Դպրոցի շենքի շինարարության վերաբերյալ, նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում<br>3.Խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին, մրցույթներին, ներքին գնահատման աշխատանքներին<br>4.Ապահովել մյուս խորհուրդների հետ սերտ համագործակցություն<br>5.Խորհրդի քննարկմանը ներկայացնել դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները, դրանում առանձին տողով ներկայացնել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, երկարօրյա դասընթացների կազմակերպումը<br>6. Կազմել դպրոցի տարիֆիկացիան, հաստիքային ցուցակն և հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնել լիազորված մարմին<br>8.Խորհրդի քննարկմանը ներկայացնել դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները, դրանում առանձին տողով ներկայացնել մանկավարժահոգեբանական աջակցության | տնօրեն<br>տնօրեն<br>տնօրեն<br>կառավարման խորհուրդ<br>տնօրեն<br>տնօրեն<br>տնօրեն<br>տնօրեն | 2023- 2028թթ | կառավարման հմտություններ | Չի պահանջվում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ծառայությունները, երկարօրյա դասընթացների կազմակերպումը<br>9. Կազմել դպրոցի տարիֆիկացիան, հաստիքային ցուցակն և հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնել լիազորված մարմին. | տնօրեն | | | |

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՆՊԱՏԱԿ

Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով, մասնագիտական և դասավանդման որակների արդիականացման և բարելավման միջոցով ուսուցման որակի բարձրացում

ԽՆԴԻՐ

Մանկավարժական խորհրդի աշխատանքներում կիրառել մասնակցային քննարկումների և որոշումների ընդունման սկզբունքները

ՌԻՍԿԵՐ

Մանկավարժների նախաձեռնողականության պակաս

ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ

Նպաստել ուսուցիչների մասնակցությանը վերապատրաստումներին, ատեստացիաներին, ինքնակրթությամբ զբաղվելուն և որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքներ տանելուն

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Համակազմի շարունակական համալրում փորձառու, երիտասարդ մասնագետներով, մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1.Կիրառել ուսուցիչների աշխատանքների գնահատման և խրախուսման նոր գործիքներ<br>2.Ուսպլանների, ծրագրերի և դասագրքերի համալիր ստեղծման գործընթացին ուսուցիչների ակտիվ մասնակցության ապահովում<br>3.Սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի առավել արդյունավետ աշխատակարգի մշակման և կիրառման ներդրում<br>4.Առաջավոր փորձի հիման վրա ակտիվացնել մանկավարժների աշխատանքային գործունեությունը<br>5.Մշտապես ուշադրության կենտրոնում պահել մանկխորհրդի ընդունած որոշումների ճիշտ և ժամանակին կատարումը | տնօրեն | 2023- 2028թթ | խորհրդակցական մարմինների վերաբերյալ իրավա կան ակտեր և կարգեր | Պետական բյուջե |

*ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ՝*

ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ՝ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ՎԵՐԱՀՍԿՈՂ՝ ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ՑՈՒՑԻՉ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒԴԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՆԳ

## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՆՊԱՏԱԿ- Մեթոդմիավորումների լիազորությունների գործնական կիրառում

ԽՆԴԻՐ- Զարգացնել առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը գործող փորձի ուսումնասիրության միջոցով

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1/Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերի, նոր փորձարկվող դասագրքերի, ձեռնարկների, մեթոդական ձեռնարկների և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տրվող երաշխավորությունների մասին քննարկումներին ապահովել երիտասարդ մանկավարժների նոր ուժերը<br>2/ քննարկման դնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.<br>3) ուսումնասիրել, ընդհանրացնել մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնել մ/մ գործնական աշխատանքներումում.<br>4) նպաստել ուսուցիչների որակավորման բարձրացմանը.<br>5) որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման.<br>6) կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.<br>7)ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.<br>8)սահմանված կարգով կազմակերպել փորձարկվող դասագրքերի փորձաքննություն.<br>9/ժողովրդավարացնել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ, ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխման նասին առաջարկությունների տնօրենին ներկայացումը | տնօրեն<br>տնօրենություն<br>տնօրենություն<br>տնօրենություն<br>տնօրենություն<br>տնօրենություն | 2023- 2028թթ | Տնօրենության կողմից իրականացվող վերահսկողություն | Պետական բյուջե |

## ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՆՊԱՏԱԿ

Դպրոց-ծնող անմիջական կապի ապահովում

ԽՆԴԻՐ

Նպաստել ծնողների՝ իրենց երեխայի մասին հնարավորինս առավել ինֆորմացված լինելուն

ՌԻՍԿԵՐ

Ծնողական համայնքի կողմից դպրոցական գործունեության մասնակցության պասիվություն

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Դպրոցի առօրյայով ապրող և հոգսերով մտահոգված ծնողական միջավայր

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1.Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդման համար կազմակերպել սեմինարներ, հանդիպումներ<br>2.Կազմակերպել համատեղ /ծնող, աշակերտ, ուսուցիչ/ միջոցառումներ<br>3.Ծնողների ու մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում<br>4.Ծնողխորհրդի նիստում հանդես գալ առաջարկություններով, խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացումը | տնօրեն | 2023- 2028թթ<br>2023- 2028թթ<br>2023- 2028թթ<br>2023- 2028թթ | նախաձեռնություն ներ | Պետական բյուջե |

***ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ՝***

ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ՝ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ՎԵՐԱՀՍԿՈՂ՝ ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ՑՈՒՑԻՉ՝ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒԴԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՆԳ

**ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՆՊԱՏԱԿ

Սովորողների ուսումնառության որակի բարելավում, աշակերտական ինքնավարության խթանում, արժեհամակարգի ձևավորում, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների կազմակերպում

ԽՆԴԻՐ

Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը

ՌԻՍԿԵՐ

Սովորողների ինքնակատարելագործման շահագրգռվածության նվազում

ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ

ՏՀՏ ծրագրերի ներդրում աշխատանքային գործունեության մեջ

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սովորողների ակտիվ մասնակցություն դպրոցին առնչվող բոլոր հարցերում

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1.Կազմակերպել միջոցառումներ, հանդիպումներ, բանավեճեր, կլոր սեղաններ և մրցույթներ, որոնք նպատակաուղղված կլինեն ազատ մտածողության զարգացմանը, ինչպես նաև պատասխանատվության ձևավորմանը<br>2.Ամրապնդել ուսուցիչ-աշակերտ, ծնող-աշակերտ, համայնք-աշակերտ հարաբերությունները<br>3.Աշակերտական խորհրդի գործունեության հիմքում կարևորելով վարվելակերպի ձևավորումը՝ շարունակել ակտիվ հասարակական անհատի կրթման, սեփական կարծիքների ազատ արտահայտման ուղղորդման ուղղությամբ կատարվող աշխատանքները<br>4.Աջակցել աշակերտական խորհրդին՝ բարձրացնելու դպրոցի և իր կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները<br>5.Մեծացնել ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունները<br>6. Ուսումնական հաստատության կայքում ԿԱՊԿ ունեցող սովորողների կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութերի, հոդվածներ, լուսանկարներ, և այլ հրապարակումներ անել | տնօրեն<br>տնօրենություն<br>տնօրենություն<br>տնօրենություն<br>տնօրենություն<br>տնօրենություն | 2023- 2028թթ | քաղաքացիական դասիարակության բարձր դրսևորում | Պետական բյուջե |

## *ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ՝*

4 (գերազանց) առկա է ակտիվ համագործակցություն տնօրենի, կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների միջև, մշակվում են համատեղ նախաձեռնողական աշխատանքներ՝ ի նպաստ դպրոցի գործունեության

3 (լավ) առկա է համագործակցություն տնօրենի, կառավարման մարմինների և խորհրդակցական մարմինների միջև, սակայն նիստերին ոչ բոլոր անդամներն են ներկա լինում, լինում են բացակա անդամներ

2 (բավարար) մշտապես տնօրենն է նախաձեռնում խորհրդակցական և կառավարման մարմինների հետ հանդիպումները, նրանց անդամները հանդես են գալիս որպես ունկնդիրներ, չկա վստահության մթնոլորտ

1 (անբավարար) տնօրենի, կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների միջև չկա վստահություն և հարգանք, նիստերը ձևական բնույթ են կրում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂ՝ ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ՑՈՒՑԻՉ՝ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐ, ԴՊՐՈՑԻ ԿԱՅՔ, ՈՒԴԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՆԳ

ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ՝ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ՎԵՐԱՀՍԿՈՂ՝ ԴԱՍՂԵԿՆԵՐ,ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ՝ ՈՒԴԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ,ՆԳ

# 7. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ

Մանկավարժական գործընթացի արդյունք հանդիսանում է սովորողի անձնային, ինտելեկտուալ զարգացումը, նրա՝ որպես անձի, գործունեության սուբյեկտի կատարելագործումը: Մանկավարժական համակազմը համալրված է փորձառու և որակյալ կադրերով:

1)Դպրոցի մանկավարժները մասնակցում են ուսումնական հաստատության կառավարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.

2) մասնակցուm են ուսումնական հաստատության գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը.

3) առաջարկներ են ներկայացնում առարկայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի բարելավման վերաբերյալ.

4) օգտվում են ուսումնական հաստատության գրադարանի, տեղեկատվական պահոցների ծառայություններից՝ ուսումնական դպրոցի կանոնադրությանը համապատասխան.

5) ընտրում են և կիրառում դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ՝ իր ընտրությամբ օգտագործելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած դասագրքեր և ուսուցողական նյութեր, ձեռնարկներ և սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդներ.

6) պաշտպանված են սովորողների, մանկավարժական և այլ աշխատողների այնպիսի գործողություններից, որոնք նսեմացնում են իրենց մասնագիտական վարկանիշն ու արժանապատվությունը.

7) գիտեն տարիքային հոգեբանությունը:

Դպրոցի ուսուցչական համակազմից կամավոր ատեստավորման մասնակցել է մեկ ուսուցիչ, որը հաղթահարել է 30%-ի շեմը: Դպրոցում ոչ մի ուսուցիչ չունի տարակարգ:

Գիտական կոչում ունեցող, միջազգային ու տեղական պարբերականներում (ամսագրերում) հրապարակված հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև

մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչներ չկան դպրոցում:

Բոլոր մանկավարժական աշխատողները վերջին 5 տարում պարտադիր վերապատրաստում են անցել նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում:

Մանկավարժական աշխատողները համակարգիչները էլեկտրոնային գրատախտակի բացակայության պատճառով ուսումնական գործընթացում հիմնականում չեն կիրառում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ:

Մանկավարժական աշխատողների բացակայությունները ուստարվա ընթացքում շատ քիչ էին, և ներկայացված էին անաշխատունակության թերթիկներ: Կարգին համապատասխան փոխարինումն իրականացված էր:

ՈՒսումական տարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց պարապմունքներ անցկացված էին ըստ մասնախմբերի աշխատանքային պլանի:

ՈՒսուցիչների տարիքային բաշխվածությունը.

| Տարիքային բաշխվածություն | |
|---|---|
| Մինչև 30 տարեկան | 1 |
| 31- 40 տարեկան | 7 |
| 41-50 տարեկան | 8 |
| 51-55 տարեկան | 2 |
| 56 և ավելի | 5 |




Դպրոցի մանկավարժական համակազմի **որակական** բարելավումը համարում եմ դպրոցի ռազմավարություններից մեկը:

ՆՊԱՏԱԿ Սովորողների կողմից՝ հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացման ապահովում՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:

ԽՆԴԻՐ Հետևողականորեն կատարելագործել ուսուցիչների առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ.

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ Ինքնակրթության արժևորում և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացում

ՌԻՍԿԵՐԸ Մանկավարժների կողմից նորարարությունների մերժում, մշակութային կարծրատիպեր, մոտիվացիայի ցածր մակարդակ

ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ձևավորել մշակույթ մանկավարժների մանկավարժական, կրթական, նեղ մասնագիտական նորագույն նվաճումների հետ ծանոթացման ուղղությամբ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնադրի կողմից կազմակերպվող վերապատրաստումներ և ատեստացիա,ԿԶՆԱԿ հիմնադրամի ,ՀԿ- ների կողմից կազմակերպվող վերապատրաստումներ, սոցցանցերում անհատների կողմից կազմակերպվող խորհրդատվություններ, վերապատրաստումներ:

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1. Ուսումնասիրել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում<br>2.Աջակցել սկսնակ ուսուցիչներին, նախապատրաստել ատեստավորման<br>3.Կազմակերպել մասնագիտական և մեթոդական խորհրդակցություններ, վերապատրաստումներ<br>4. Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը. կազմակերպել հատուկ դասընթացներ, որոնց արդյունքում յուրաքանչյուր ուսուցիչ կտիրապետի համակարգչային ծրագրերին և կկարողանա օգտվել համացանցից մեթոդական ընթերցումներ:<br>8. Բարձրացնել ուսուցչի հեղինակությունը դպրոցում և հասարակության մեջ:<br>9. Ստեղծել հարգանքի և վստահության մթնոլորտ | տնօրենություն | 2023- 28թթ | կրթության ոլորտի բոլոր կարգեր մասնագիտական գրականություն վերապատրաստման և ատեստավորման նորմատիվ փաստաթղթեր, պայմանագրեր, ՏՀՏ միջոցներ վերապատրաստում ներ, ՏՀՏ գովասանք կրթության շահառու ների շրջանում, շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում | Պետական բյուջե |

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԵԽԱՆԻԶՄ՝ ՀԱՐՑԱԹԵՐԹ , ՀԱՇՎԱՐԿ

ՎԵՐԱՀՍԿՈՂ՝ Մ/Մ ՆԱԽԱԳԱՀ, ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ՝ ՈՒԴԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ,ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## 8.ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

2022-2023 ուստարվա դպրոցում սովորում է 290 աշակերտ:: Ծնողները կարևորում են դպրոցի բարձր համբավը, կարգապահությունը, գնահատում խստապահանջությունն ու կրթության և դաստիարակության միասնականությունը, որակը, ուսումնական ջերմ և ապահով միջավայրը: Հատուկ ուշադրություն է դարձվում շնորհալի և ստեղծագործող աշակերտներին, նրանց հաջողություններին և՛ դպրոցում, և՛ դպրոցից դուրս:

Դպրոցի աշակերտները մասնակցում են զբաղեցնում առարկայական օլիմպիադաների, սակայն մրցանակային տեղեր չեն զբաղեցրել:

Նախատեսում ենք դպրոցի կայքում ստեղծել հատուկ բաժին՝ շնորհալի սովորողների և նրանց հաջողությունների մասին պատշաճ տեղեկատվության համար:

***Դասարանների թիվը՝ նախորդ 3 ուստարիների համար***

| Դասարաններ թիվը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան(աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| 1 –ին դասարան | 2 | 2 | 1 | նվազում |
| 2-րդ դասարան | 2 | 2 | 2 | |
| 3-րդ դասարան | 1 | 2 | 2 | |
| 4-րդ դասարան | 2 | 1 | 2 | աճ |
| 5-րդ դասարան | 2 | 2 | 1 | նվազում |
| 6-րդ դասարան | 2 | 2 | 1 | նվազում |
| 7-րդ դասարան | 1 | 2 | 2 | |
| 8-րդ դասարան | 2 | 1 | 2 | աճ |
| 9-րդ դասարան | 1 | 1 | 1 | |
| Ընդամենը | 15 | 15 | 15 | |

Դասարանների ընդհանուր թվաքանակը չի փոփոխվել:

***Ըստ դասարանների սովորողների թիվը՝ նախորդ 3 ուստարիների համար***

| Սովորողների թիվը | 2021-2022 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան(աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| 1- րդ դասարան | 42 | 36 | 23 | նվազում |
| 2- րդ դասարան | 43 | 39 | 38 | նվազում |
| 3- րդ դասարան | 34 | 40 | 33 | նվազում |
| 4 -րդ դասարան | 37 | 32 | 43 | աճ |
| 5- րդ դասարան | 38 | 38 | 32 | նվազում |
| 6 -րդ դասարան | 39 | 38 | 33 | նվազում |
| 7- րդ դասարան | 25 | 35 | 41 | աճ |
| 8 -րդ դասարան | 31 | 27 | 32 | աճ |
| 9 -րդ դասարան | 23 | 29 | 28 | նվազում |
| Ընդամենը | 312 | 314 | 303 | նվազում |

| Վերջին 3 տարիների շարժը՝ | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | 12 | 11 | 8 |
| Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը | 10 | 17 | 12 |




Վերլուծության արդյունքում երևում է, որ այս ուսումնական տարում նվազել է աշակերտների թիվը: Դպրոցից հեռացողների հիմնական պատճառաբանությունը եղել է համապատասխան պայմանների բացակայությունը:

Վերլուծությունից պարզ է դառնում, որ համապատասխան պայմանների առկայության դեպքում բավականին շատ աշակերտների ներհոսք կգրանցվի:

## 9.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ:

Դպրոցի շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցությունը մեծ է:

ՈՒսումնական հաստատությունը համագործակցում է ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Շիրակի մարզպետարանի, Գյումրու համայնքապետարանի, ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՊՆ-ի, Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի,Գյումրու քաղաքային գրադարանի, ՌԴ հյուպատոսության, իրավապահ մարմինների, «Ինտերակտիվ» կրթության զարգացման հիմնադրամի, տարածաշրջանի այլ դպրոցների ու մանկապարտեզների հետ:

Դպրոցը համագործակցում է Շիրակի ՏՄԱԿ-ի, «Հույսի կամուրջ», «Կարիտաս», «Նոր լույս» Հ/Կ-ների հետ:

Դպրոցը շատ ակտիվ համագործակցում է թատրոնների, թանգարանների և այլ մշակութային կենտրոնների հետ:

Դպրոցի մանկավարժների և սովորողների նախաձեռնությամբ համայնքի բնակիչների համար կազմակերպվել ու անցկացվել են բազմապիսի միջոցառումներ՝ հայրենասիրական, ընտանեկան, գեղագիտական, սոցիալական դաստիարակության նպատակով և այլն: Կազմակերպվել են բնապահպանական աշխատանքներ՝ ծառատունկ, տարածքի մաքրում, աղբի զանազանում, շաբաթօրյակներ:

Չկա համագործակցություն դոնոր կազմակերպության հետ, որը որոշակի հարցերում կֆինանսավորի դպրոցի ուսումնական ծրագրերը: Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ վատ է, թույլ է կապը հասարակական կազմակերպությունների հետ:

## 9.1ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

ՆՊԱՏԱԿ

Պահանջների միասնականության ապահովում հանրակրթության համակարգում:

ԽՆԴԻՐ

Կրթական չափորոշիչների, ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի մշակման, ուսուցիչների և տնօրենների վերապատրաստման հարցերում ուշադրության կենտրոնացում ապահովել;

ՌԻՍԿԵՐ

Աշխատակիցների կողմից նորմատիվ ակտերի անտեղյակություն

ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ

Փաստաթղթերի մշակում, իրազեկում

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կառավարման մարմինների կողմից օրենքով նախատեսված կարգերի,հրահանգների կատարում, օրինակելի կանոնադրության, լիցենզիայի, ուսպլանի, դպրոցական բոլոր տեսակի հաշվետվությունների, ներքին և արտաքին գնահատման հետ կապված աշխատանքների կատարելագործում

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անմիջական շփումներ, սեմինարներ, տեղեկատվական մեծ դաշտ

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1. Դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հանդիպումների, քննարկումների կազմակերպում<br>2.Կատարելագործել կառավարման մարմինների կողմից օրենքով նախատեսված կարգերի, հրահանգների կատարումը<br>4/ Կատարելագործել վերահսկողության հաշվետվությունների, ներքին և արտաքին գնահատման հետ կապված աշխատանքները | տնօրեն<br>տնօրենություն<br>տնօրենություն<br>տնօրենություն | 2023- 2028թթ | կառավարման հմտություններ | Պետական բյուջե |

## 9.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

ՆՊԱՏԱԿ

Տեղական ինքնակառավարման մարմիններ –դպրոց կապի ամրապնդում

ԽՆԴԻՐ

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը դպրոցի հետ կապված բոլոր հարցերում արդյունավետ դարձնել

ՌԻՍԿԵՐ

Անհամաձայնություններ, աշխատանքային պարտականությունների կատարման թերացումներ

ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ

Կազմակերպել խորհրդատվություններ, անհատական հանդիպումներ

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Դպրոցի նկատմամբ հետաքրքրված, մտահոգ վերաբերմունքի ձևավորում՝ որը կլինի վարակիչ համայնքի բոլոր անդամների համար

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1. Ապահովել հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների իրավունքների իրացմանն ու շահերի պաշտպանությանը տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությունը:<br>Մշտապես կապ պահպանել ներգրավված բոլոր երեխաների ծնողների, հոգեբանների, սոցմանկավարժների հետ՝ նրանց զգուշացնելով իրենց երեխայի վարքի մասին: Համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողների հետ:<br>2. Կազմակերպել համատեղ միջոցառումներ, հանդիպումներ: | տնօրենություն դասղեկներ, | 2023-2028 թթ | Հանդիպումներ | Պետական բյուջե |

**9.3** ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

ՆՊԱՏԱԿ

Սովորողների կրթության գործում ծնողի դերի մեծացում՝ բարելավելով դպրոցում իրականացվող դաստիարակչական աշխատանքները՝մշակելով և ներդնելով արդյունավետ մեխանիզմեր, դպրոցում ներմուծելով կրթական արդի ծրագրեր

ԽՆԴԻՐ

1.Ուսուցման ցանկալի արդյունքների համար բարձրացնել սովորողների ծնողների պատասխանատվությունը: 2.Բարձրացնել ընտանիք-դպրոց փոխադարձ վստահության մակարդակը:

ՌԻՍԿԵՐ

Ծնողների պասիվություն ուսուցման և դաստիարակության հարցում:

ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ

Ծնողների իրավունքների և պարտականությունների մասին իրազեկում ծնողական ժողովների ժամանակ

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նախաձեռնող, քննարկող, լուծումներ առաջարկող ծնողական համայնք

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1. Դասղեկների պարբերաբար տունայցերի միջոցով ծանոթանալ և տեղեկություններ հավաքել ընտանիքի փաստացի վիճակի մասին<br>2. Կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական մեխանիզմները համապատասխան մասնագետների կողմից /հոգեբան, ուսուցիչ՝ տրամադրելով խորհրդատվություն<br>3. Ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետընտանիքների առաձնակի դժվար պայմաններից, հաշմանդամ կամ գործազուրկ ծնողի խնամքի տակ ապրող երեխաների մասին<br>4.Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ և հանդիպումներ դպրոցի անձնակազմի հետ<br>5. Ծնողների համար կազմակերպել միջոցառումներ, հանդիպումներ և մրցույթներ: Խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցացաբերած ծնողներին:<br>6. Աջակցել ծնողներին, խնամակալներին և ընտանիքներին-վաղ մանկական զարգացման վերաբերյալ: | տնօրենություն դասղեկներ<br>տնօրենություն դասղեկներ<br>տնօրենություն դասղեկներ<br>տնօրենություն դասղեկներ<br>տնօրենություն դասղեկներ<br>տնօրենություն դասղեկներ | 2023-2028 թթ | Ծրագրեր, հանդիպումներ, բացատրական աշխատանքներ | Պետական բյուջե<br>Հովանավորներ<br>Ծնողական ներդրումներ |

Ուսուցիչների աշխատանքների գնահատման և խրախուսման նոր գործիքներ չեն կիրառվել:

ՆՊԱՏԱԿ

Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով, մասնագիտական և դասավանդման որակների արդիականացման և բարելավման միջոցով ուսուցման որակի բարձրացում

ԽՆԴԻՐ

Մանկավարժական խորհրդի աշխատանքներում կիրառել մասնակցային քննարկումների և որոշումների ընդունման սկզբունքները

ՌԻՍԿԵՐ

Մանկավարժների նախաձեռնողականության պակաս

ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ

Նպաստել ուսուցիչների մասնակցությանը վերապատրաստումներին, ատեստացիաներին, ինքնակրթությամբ զբաղվելուն և որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքներ տանելուն

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Դպրոցի կառավարման ժողովրդականացում

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1.Ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները<br>2.Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում<br>3.Ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը<br>4.Մանկավարժական խորհրդի լիազորությունների գործնական կիրառում<br>5. Կրթական գործընթացի զարգացմանն աջակցելու գործում կարևորել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդների դերը<br>6. Ըստ կարգի ԿԽ,ՄԽ,Մ/Մ,ԾԽ,ԱԽ, ժամանակին նիստեր անցկացնել, արձանագրել և վերահսկել որոշումների կատարմանը | տնօրեն | 2023- 2028թթ | Կառավարման հմտությունների բարելավման բազմաթիվ ռեսուրսներ | Պետական բյուջե |

## 9.4 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

ՆՊԱՏԱԿ

Կրթական գործընթացի մանկավարժական, ֆինանսական, սոցիալական, մասնագիտական, հետազոտական, կազմակերպական ուղղությունների ապահովում

ԽՆԴԻՐ

Որոնել և գտնել դպրոցի մանկավարժների և սովորողների կրթության և ինքնակրթության որակով, ուսումնական միջավայրով շահագրգիր կազմակերպություններ

ՌԻՍԿԵՐ

Արտաքին միջամտություններ ներքին կառավարման գործընթացներին

ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ

Մշտապես կապի հաստատում և տեղեկությունների փոխանակում

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կրթական գործընթացի շարունակականություն և որակ

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կրթության ոլորտում տարբեր շահագրգիռ կառույցների և դպրոցի կառավարման, խորհրդակցական մարմինների միջև շփման հնարավորություններ ստեղծել | տնօրենություն | 2023- 28թթ | հանդիպումներ | Պետական բյուջե |
| Խրախուսել խոհրդակցական մարմինների նախաձեռնողակա - նությունը շահառու կազմակերպությունների ընտրության հարցում | տնօրենություն | 2023- 28թթ | մրցույթներ | Պետական բյուջե |
| Մշտապես կատարելագործել տնօրենության կառավարչական հմտությունները: Կատարելագործել ՏՀՏ գործիքների կիրառումը շահառու – դպրոց համագործակցության ընթացքում: | տնօրենություն | 2023- 28թթ | վերապատրաստում ներ, ՏՀՏ | Պետական բյուջե |
| Խթանել համագործակցությունը կրթական տեղական կառույցների հետ: Մասնակցել մեթոդական, գործնական ժողովների, փորձի փոխանակման միջոցառումների: | տնօրենություն | 2023- 28թթ | մասնագիտական գրականություն | Պետական բյուջե |

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ուսումնական հաստատությունն ու համայնքը համագործակցում են, և ուսումնական հաստատությունը վարում է ակտիվ հասարակական կյանք

ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ՝ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ՎԵՐԱՀՍԿՈՂ՝ ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ՑՈՒՑԻՉ՝ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒԴԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՆԳ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4 (գերազանց) մշտապես ձևավորված է ՏԻՄ-ի հետ հաղորդակցություն, ծնողական համայնքն ակտիվ ներգրավված է դպրոցի ուսումնադաստիարակչական համապատասխան գործընթացներում, առկա է այլ գործընկերների հետ համագործակցություն

3 (լավ) ՏԻՄ-ի հետ ձևավորված համագործակցություն առկա է, այլ գործընկերների հետ քիչ է պարբերականությունը, ծնողական համայնքի կողմից թույլ է համագործակցությունը

2 (բավարար) ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ համագործակցությունը զուտ պաշտոնական բնույթի է, ծնողական համայնքին դպրոցը ուսումնադաստիարակչական աշխատաքններում ներգրավում է մասնակի

1 (անբավարար) ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ հազվադեպ են համագործակցային աշխատանքները, դպրոցը չի կազմակերպում ծնողական համայնքի հետ ոչ մի տեսակ համագործակցություն

## 10.ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ

Կրթության որակ՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների եւ խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը եւ ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների:

Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից:

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, խնդիր է դրվել սովորեցնելու սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները: Այդ նպատակով անհրաժեշտ է սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ:

Սովորողը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային և այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները.

1. Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը:
2. Կրթական գործընթացի կատարողականը:
3. Կրթական գործընթացի արդյունավետությունը:
4. Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում:
5. Դասերի, ուսումնական միջոցառումների որակը:

Վերլուծության արդյունքում պարզվեց, որ հաստատությունն ապահովում է սովորողների առաջխաղացումը և բարձր առաջադիմությունը: Տարրական օղակում առաջադիմությունը շատ ավելի բարձր է, քան միջին դասարաններում: Միջին դասարաններում առաջանում է հետաքրքրություն առաձին առարկաների գծով, առաջ է գալիս մասնագիտության կողմնորշման հարցը, և որոշ առարկաներ անտեսված են մնում :

## Կրթության որակը 2021-2023 ուստարիների ընթացքում




Սովորողները մասնակցություն են ցուցաբերել տարբեր առարկաների օլիմպիադաների, սակայն մարզային փուլից առաջ չեն գնացել:

Հաստատության սովորողները ակտիվորեն մասնակցում են մարզական և մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթներին:

ՆՊԱՏԱԿ

Սովորողների կողմից՝ հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացման ապահովում՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ

Մեր առջև ***խնդիր ենք դնում*** բարձրացնելու աշխատանքային կարգապահությունը և ուսուցման որակը:

ՌԻՍԿԵՐԸ

Մանկավարժների հոռետեսական մտածումներ

ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձևավորել մշակույթ մանկավարժների մանկավարժական, կրթական, նեղ մասնագիտական նորագույն նվաճումների հետ ծանոթացման ուղղությամբ

## Կրթության որակի բարձրացման քայլարշավ

արձանագրենք մի կարևոր փաստ.

մատաղ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների պատվաստումն իրականացվում է հիմնականում այլ գործոնների շնորհիվ: Դա ժողովրդավարական համակարգի տարրերի առկայությունն է հասարակական կառուցվածքներում, ուսումնական գործընացի ընդհանուր կուլտուրան է, կրթական համակարգում հաստատված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, սովորողների և ուսուցիչների հարաբերությունների ժողովրդավարական ոճը, ի վերջո՝ օրենքի գերակայության հաստատումն ու նրա հարգումը կրթության բոլոր սուբյեկտների կողմից: Կարճ ասած, դաստիարակության մեջ որոշիչը միջավայրն է. եթե հասարակությունն ինքը չի ապրում ժողովրդավարական արժեքներով, դրանք չի կարող մատուցել և ստիպել նրանցով ապրել իր սերունդներին: Մարդն ընդօրինակում և վարքի նորմա է դարձնում այն ամենը, ինչ տեսնում է, ինչի ներգործությունն իր վրա զգում է, ինչը կարևորում է իր սոցիալական առաջընթացի ու բարոյական հասունացման համար: Ուրեմն դաստիարակության ու սոցիալականացման խնդիրներում խոսքն ու խրատը, քարոզը, արհեստականորեն ստեղծված կարգ ու կանոնը որոշիչ չեն, **որոշիչ են կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան, աշխատանքային և ուսումնական նորմալ պայմանները, ուսումնական պրոցեսում սովորողների ազատության և ինքնուրույնության աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:** Դաստիարակության ընդհանուր ռազմավարության և օպտիմալ տեխնոլոգիաների բացակայության պայմաններում ուսուցչի դերն առավել կարևորություն է ստանում: Ուսուցչի բարոյական նկարագիրը, մեթոդական պատրաստվածության մակարդակը, նրա անձնային ու ինտելեկտուալ որակները դաստիարակչական մեծ ներուժ ունեն:

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1.Հորդորել ուսուցիչներին հաճախակի կազմակերպել բաց դասեր և նրանց հետ վերլուծել դասը:<br>2.Ուսուցիչների հետ համատեղ կազմել ինքնազարգացման պլանի օրինակելի նմուշ,<br>3.Կազմել պլան՝ մ/մ-ների կողմից մանկավարժների ինքնազարգացման աշխատանքների արդյունքում հետաքրքրաշարժ ստեղծագործական աշխատանքները ներկայացնելու համար,<br>4.Աջակցել մանկավարժներին՝ կազմելու և հրապարակելու իրենց մեթոդական աշխատանքներ,<br>5.Ուսուցիչներին ներկայացնել նոր ՀՊՉ-ն և | Տնօրեն, տնօրենի տեղակալ<br>Տնօրեն, տնօրենի տեղակալ մ/մ-ների նախագահներ<br>Տնօրեն, | 2023- 28թթ | Միասնական, համագործակցված աշխատանք բոլոր ոլորտներում: | Պետական բյուջե |

| | | | | |
|---|---|---|---|---|
| փոփոխությունները,<br>6.Նպաստել, աջակցել և ապահովել ուսուցիչների մասնակցությունը մրցույթներին,<br>7.Ուսուցիչների համակարգչային գրագիտությունը բարելավելու ուղղությամբ քայլեր ձեռնարկել:<br>8.Վերանայել ուսուցման բովանդակությունը, փոփոխել և դարձնել արդի պահանջներին համապատասխան.<br>9.Արժևորել և նախապատվությունը տալ ուսուցման պրակտիկ ուղղվածության,<br>10.Ուսուցիչների հետ համատեղ մշակել սովորողների ինքնուրույնության կայացմանը սատարող ռազմավարություն և իրացնել այն ինչպես կրթության բովանդակությամբ ու գնահատման համակարգով, այնպես էլ ուսուցման տեխնոլոգիաներով:<br>11.Սովորողների ուսումնական գործունեությունը կազմակերպել որպես ուսումնահետազոտական գործունեություն:<br>12.Դպրոցում սովորող՝ արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների համար անհատական ուսուցման կազմակերպում:<br>13.Տարվա լավագույն ուսուցիչների համար կիրառել խրախուսման տարբեր միջոցներ՝դրամական պարգևատրում, շնորհակալագիր և այլն: | տնօրենի տեղակալ<br><br>Տնօրեն, տնօրենի տեղակալ<br><br>Տնօրեն, տնօրենի տեղակալ | | | |

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ Ուսումնական հաստատությունն ապահովում է սովորողների առաջխաղացումը և բարձր առաջադիմությունը.

4 (գերազանց) սովորողների կրթության որակը և առաջադիմությունը ակնհայտ է և փաստարկված, առկա են թվային հիմնավորումներ

3 (լավ) գործողության իրականացումն էապես ազդել է սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա

2 (բավարար) ձեռնարկված գործողությունները ունեցել են չափավոր ազդեցություն և նշանակալի արդյունքներ չեն գրանցել սովորողների կրթության որակի և առաջադիմության առումով

1 (անբավարար) սովորողների կրթության որակի և առաջադիմության բարձրացման վրա գործողության ազդեցություններ չեն գրանցվել

ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ՝ ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍԹ, ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ, ՀԱՇՎԱՐԿ,ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ ՎԵՐՋՈՒՄ

ՎԵՐԱՀՍԿՈՂ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ , ԴԱՍՂԵԿՆԵՐ, ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ՝ ՆԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 11.ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերտների գիտելիքների գնահատման, անհատական առաջադրանքների հանձնարարման և ուսումնական ծրագրերի կազմման ընթացքում պետք է լայնորեն օգտագործեն ժամանակակից տեխնոլոգիաներ: Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների , ուսուցման նոր ձևերի մշակումը: Դպրոցը պետք է ապահովված լինի այն բոլոր տեխնիկական միջոցներով, որոնք անհրաժեշտ են 21–րդ դարի քաղաքացիների ձևավորման համար: Ուսուցիչները պետք է ամեն անգամ նորովի կարողանան դասապրոցեսին կիրառել նոր տեխնոլոգիաները: Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված էլեկտրոնային փաստաթղթեր և դրանք վարվում են ըստ կարգի : Դպրոցում առկա է ինտերնետ կապ, որը մանկավարժներին, աշակերտներին, վարչական աշխատողներին հնարավորություն է տալիս դասի ընթացքում և դասից դուրս՝ տանը, պատրաստել քարտեր, ռուբրիկներ, հանել դասին առնչվող լրացուցիչ նյութեր, կազմել ծրագրեր, պլանավորել դասը, կազմակերպել տարբեր առարկաների դասի բովանդակությանն առնչվող մոտիվացնող նյութեր՝ գունավորելու հնարավորությունը թողնելով սովորողների ճաշակին: 2020 թվականի մարտին դպրոցի ուսուցչական կազմն առանց բարդությունների, սահուն անցավ հեռավար ուսուցման: Իսկ այսօր արդեն իրականացվում է հիբրիդային ուսուցում՝ ըստ հեռավարի կարգի, հարկ եղած դեպքում դասերը վարվում են MS Teams միասնական կրթական հարթակի միջոցով՝ օգտագործելով տարբեր էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, ուսուցիչների մեծ մասը դասերը վարում է և՛ համաժամանակյա, և՛ պլանավորելով առցանց առաջադրանքներ: Վարչական աշխատողները պաշտոնական գրությունները՝ ամբողջ թղթավարությունը, տարիֆիկացիաները, տարեկան պլանները, հաշվետվությունները, տնօրենական գրավորների հաշվետվությունները, գնահատման ձևաչափերը կազմում են համակարգչով՝ նորացված ծրագրերով: Ուսուցիչներից շատերը տիրապետում են նոր գործիքակազմին, դասերի որակը և մեթոդները դարձնում ավելի մոտիվացնող:

Որոշ էլեկտրոնային փաստաթղթեր / կարգեր/ արդյունավետ, ժամանակակից, իրականանալի (իրականացնելի)չեն, բայց պիտի ապահովեն աշակերտների գիտելիքի կարողությունների և հմտությունների աճը:

Էլեկտրոնային Ուսպլանը , ՈՒԴԱՊ, ՆԴՎ, թեմատիկ պլանավորումը, Օրվա պլանավորումը, հաշվետվությունները, ներքին և արտաքին գնահատումները ունենում են լուրջ թերություններ:

EMIS.am հարթակում էլեկտրոնային մատյանների լրացումը կատարվում է որոշակի թերություններով:

Տարիք ունեցող մանկավարժների ՏՀՏ գործիքների տիրապետման ցածր մակարդակ կա:

Ոչ բոլոր դասերին է օգտագործվում ՏՀՏ և նորարարություններ:

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում – ՏՀՏ<br>---Ուսումնական պլանի հիման վրա կրթության կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնել դասաբաշխում, ձևավորել և հաստատել ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ հաստիքների ցուցակը,<br>Ըստ դասաբաշխման լրացնել և հաստատել համակարգի կողմից ձևավորված տարիֆիկացիան<br>---Ապահովել Էլեկտրոնային մատյանների բարձրակարգ մատենավարություն<br>---Կառավարչական բոլոր տիպի աշխատանքները հնարավորինս թվայնացնել<br>---Հաստատել ուսումնական պլանը, էլեկտրոնային դասացուցակը ,և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին կիսամյակային և տարեկան հաշվետվությունները<br>---Կազմակերպել դպրոցի էջի վարումը դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ ԴԿՏՀ).<br>---Ապահովել ԴԿՏՀ բաժինների լրացման/խմբագրման ժամկետների պահպանումը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի օգոստոսի 17-ի Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը սահմանելու և կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստրը ներդնելու մասին N 65-Ն հրամանով հաստատված կարգին համապատասխան.<br>---Ապահովել ուսուցման կազմակերպման համակարգում (այսուհետ՝ ՈՒԿՀ) գործարկումը և համակցված/հեռավար ուսուցման կազմակերպումը՝ հարկ եղած դեպքում<br>---Կատարել ներքին գնահատում կազմել էլեկտրոնային տարբերակով և տեղադրել պաշարների շտեմարանում ---Ապահովել Teams ծրագրի ծածկագրեր ուսուցիչներին և աշակերտներին և հետևել<br>---Կառ. խորհրդի և բոլոր խորհրդ. մարմինների արձանագրությունները կազմել էլ. տարբերակով: | տնօրեն<br>տնօրենի տեղ. գործավար<br>օպերատոր<br>տնօրեն<br>ուսուցիչներ<br>տնօրեն<br>տնօրեն , գրադարա նավար<br>օպերատոր<br>տնօրեն<br>տնօրեն<br>տնօրեն<br>օպերատոր<br>տնօրեն, մ/մ նախագահներ<br><br>տնօրեն<br>օպերատոր<br>մարմինների քարտուղար<br><br>գոստոս սեպտեմբերի 5 ծրագրի իրականաց ման ընթացքում | օգոստոսի 31<br><br>սեպտեմբերի 1<br><br>2023-2028 թթ | ՀՊՉ, կրթական ոլորտի նորմատիվ փաստաթղթեր, ակտեր, համակարգիչ տպիչներ, նոութբուքեր, անխափան ինտերնետ կապ, պատրաստակա մություն աշխատասիրու թյուն ՆԳ ինտերնետ կապ, | ինտերնետ կապի միջոցներ<br><br>Ծնողական ներդրումներ |

Այս հիմնախնդիրները ***լուծելու նպատակով*** հարկ ենք համարում ՏՀՏ-ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով ապահովել սովորողների անհատական առաջընթացը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4 (գերազանց) Նախաձեռնությունը լիարժեք իրականացված է

3 (լավ) Նախաձեռնության իրականացման ուղղությամբ կատարվել են էական աշխատանքներ, սակայն աշխատանքները դեռ չեն ավարտվել

2 (բավարար) Նախաձեռնության համար կա պլանավորված ժամանակացույց, աշխատանքները մեկնարկել են, սակայն նշանակալի առաջընթաց չի գրանցվել

1(անբավարար) Նախատեսված աշխատանքները չեն մեկնարկել

## 12.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Դպրոցը ուսումնական գործընթացին զուգահեռ իրականացնում է մի շատ կարևոր գործառույթ ևս՝ դաստիարակությունը: Այս գործում կարևոր են և՛ ծնողի, և՛ ուսուցչի դերը:

Դաստիարակչական համակարգի նպատակն է՝

1.Սովորողի մեջ ձևավորել հայրենասիրություն, մարդասիրություն, հարգալից վերաբերմունք հայոց լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրողը, պահպանողը և փոխանցողը:

2. Ձևավորել հարգանք ազգայինի և համամարդկայինի նկատմամբ:

3.Յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ:

4.Օգնել սովորողին /հատկապես դեռահասին/ առանց սթրեսների հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին:

ԽՆԴԻՐ

- ՈՒսուցման և դաստիարակության արդյունավետ մեխանիզմների մշակում:
- Ներդպրոցական վերահսկողության կազմակերպում, աշխատանքային կարգապահության ապահովում, համագործակցային փոխհարաբերությունների ամրապնդում:

Դաստիարակչական համակարգի կատարելագործմանն ուղղված աշխատանքները կլինեն արդյունավետ, եթե ծնողները հավասարապես համագործակցեն ուսուցիչների հետ և ստանձնեն պատասխանատվություն իրենց երեխաների դաստիարակության խնդիրը լուծելու գործում:

Դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

1.Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում:

2.Ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումն ու տարածումը։
3.Մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտել առկա խնդիրներն ու բացթողումները, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ։

4.Անհրաժեշտ է համագործակցել հոգեբանամանկավարժական վերապատրաստում իրականացնող մարմինների հետ, որի գործունեության արդյունքում կբարելավվեն և կամրապնդվեն մանկավարժ-ԿԱՊԿՈՒ աշակերտ, աշակերտ-ԿԱՊԿՈՒ աշակերտ փոխհարաբերությունները, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվար դաստիարակվող երեխաների հետ։

5.Ընդլայնել դասարանների առանձին սովորողների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների պատկանող սովորողների ներդպրոցական և արտադպրոցական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները։

6.Բոլոր աշխատանքները պետք է նպատակաուղղված լինեն սովորողի մոտ արժեհամակարգի ձևավորմանը, որի արդյունքում նա կլինի ազգային արժեքների կրողը, պահպանողը և փոխանցողը։

7.Ապահովել արտակարգ ընդունակություններ դրսևորած աշակերտների մասնակցությունը օլիմպիադաներին, մրցույթներին, միջոցոռումներին:

8.Ներդնել աշակերտների ստեղծագործական, հետազոտական, նորարարական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ՝ պատվոգրեր, պարգևներ, խրախուսման այլ ձևեր:

9.Զարգացնել ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման կարողություններն ու հմտությունները: / Կատարողներ՝ տնօրեն, փոխտնօրեններ: Կատարման ժամկետը՝ 2023-2028 թթ./

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4 (գերազանց) Նախաձեռնությունը լիարժեք իրականացված է

3 (լավ) Նախաձեռնության իրականացման ուղղությամբ կատարվել են էական աշխատանքներ, սակայն աշխատանքները դեռ չեն ավարտվել

2 (բավարար) Նախաձեռնության համար կա պլանավորված ժամանակացույց, աշխատանքները մեկնարկել են, սակայն նշանակալի առաջընթաց չի գրանցվել

1(անբավարար) Նախատեսված աշխատանքները չեն մեկնարկել

## 12.1 ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*Հայրենապաշտական դաստիարակություն –*
*ահա՛ մեր փրկության խարիսխը:*

Սովորողների հայրենասիրական դաստիարակությունը մշտապես եղել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ պատկերացումները ճիշտ ձևավորելու, սեր արմատավորելու համար:

Հայրենասիրական դաստիարակության բնագավառում ուղենշային նպատակներին հասնելու համար մեր կարծիքով անհրաժեշտ է՝

- դպրոցի վարչական և ուսուցչական անձնակազմին ակտիվորեն ընդգրկել սովորողների հայրենասիրական դաստիարակության ծավալման և կատարելագործման գործընթացներում,
- պարբերաբար համակարգել, վերլուծել և գնահատել ծրագրավորված հայրենասիրական միջոցառումների կատարման արդյունավետությունը,
- դպրոցական հիմնական բոլոր միջոցառումներն իրականացնելիս ապահովել հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարների գործածումը,
- ամփոփել և տարածել հայրենասիրական դաստիարակության ասպարեզում լավագույն մասնագետների մանկավարժական առաջավոր փորձը,
- հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդնել աշխատանքի նոր ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցները և ժամանակակից տեխնոլոգիաները՝ ֆիլմեր, սկավառակներ, էլեկտրոնային նյութեր և այլն,
- դպրոցի աշակերտական խորհրդին ընդգրկել ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներում,
- հաճախակի անցկացնել ռազմահայրենասիրական բնույթի մրցույթներ, հանդիպումներ, զրույցներ և այլ միջոցառումներ, ինչպիսիք են՝
- «Հայոց պատմություն», «Հայ ազգ», «Հայոց լեզու», «Հայ ընտանիք» թեմաներով հանդիպումները, զրույցները, սեմինարները և այլ միջոցառումները,
- հայտնի մարդկանց, զինվորների, հայ ազատամարտիկների, պատերազմի հաշմանդամների հետ հանդիպումները:

## 13.ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ուսումնական հաստատությունը համախմբում է կրթական գործընթացի բոլոր մասնակիցների (ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ) ներուժը և ստեղծում նրանց միջև արդյունավետ համագործակցություն ինչպես դպրոցի և համայնքի, այնպես էլ ընդհանուր մակարդակներում:

Դպրոցում առկա է հասարակության լիիրավ անդամի գիտակցության բարձր մակարդակ:

Դպրոցում՝ որպես ԿԱՊԿՈՒ աշակերտ ՏՄԱԿ-ի կողմից գնահատված, գրանցված 19 սովորող կա: Գոյություն ունի օրենքների բավարար իմացություն:Առկա են հասարակական գործունեության դրսևորումներ մասնակցայնությանը, ինտեգրմանը կրթական գործընթացում ապահովելու համար:

Ինքնազարգացման և հասարակական գործունեության դրսևորումները միշտ ընթացքի մեջ են: Հետևողականություն կա սովորողների կողմից ուսումնական, սոցիալական, ֆիզական խնդիրներ ունեցող ընկերների նկատմամբ : Բավարարվում է երեխաների կրթության իրավունքի իրացումը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները: Սովորողների ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության ձևավորում,ամրապնդում են շարունակաբար: Սովորողների նպաստավոր գործողություններ՝ ուղղված իրենց կրթական սոցիալականացման, իրավունքների պաշտպանության, առողջության պահպանման արդիականացմանը Մասնակցային և բազմակարծության գործընթաց կառավարման,ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, հանրային քնարկման, որոշումների կայացման, ռեսուրսների բաշխման, ուսման և դաստիարակման որակի համար: Ազգային փոքրամասնության,կրոնական այլ ուսմունք ունեցող, սոցանապահով ԿԱՊԿՈՒ սովորողները ապահով են և անվտանգ: Նրանք տեղեկացված են իրենց իրավունքնե րից և պարտականություններից: Հանդուրժող են իրենց ընկերների, դասընկերների, ուսուցիչների և շրջապատի նկատմամբ:

Վերջին տարիներին իրականացված ուսուցիչների մասնագիտական զարգացման դասընթացների արդյունքում կիրառվում են ուսուցման ակտիվ և համագործակցային մեթոդները: Դրանց կիրառումը այսօր կարևոր է, քանի որ ժամանակակից աշխարհում ուսուցումը հնարավոր չէ առանց դասապրոցեսին սովորողի ակտիվ մասնակցության:

Դպրոցում առկա են ուսումնական առարկաներից հետ մնացող աշակերտներ, որոնց համար անհրաժեշտ է ստեղծել ինտեգրման մշակույթ ծնողի , ուսուցչի և ընկերների կողմից:

ՆՊԱՏԱԿ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՆՁԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԵՎ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ՝ ՆՐԱ ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ԼԻԱՐԺԵՔ ԻՆՔՆԱԻՐԱՑՄԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ

ԽՆԴԻՐ

Ստեղծել բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր , զարգացնել սովորողների հասարակական ակտիվությունը դրսևորելու հմտությունները

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սովորողի՝որպես ՀՀ քաղաքացու, հասարակության լիիրավ անդամի գիտակցության կատարելագործում:

Սովորողների մտածելակերպի մեջ կրթության , ներդաշնակ զարգացման և զարգանալու ձգտման պլանավորման կարողությունների ձևավորում, սովորողների ինքնակառավարման, ինքնազարգացման և հասարակական գործունեության դրսևորում, պետության կողմից տարվող

հասարակական-քաղաքական կյանքին պատրաստ շրջանավարտների առկայություն:

ՌԻՍԿԵՐ

Մարդկային բնավորության նեղ գծեր, կամային որակներ, որոնք խոչնդոտում են, խանգարում սովորողին ուսումնառության և ուսուցչին՝ աշխատանքային գործունեության մեջ:

Ներառական կրթության ապահովման համար բազմամասնագիտական թիմի ոչ բավարար պատրաստվածություն:

ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ

Բարձրացնել ուսուցիչների և աշակերտների գիտակցական մակարդակը դպրոցական , կրթական, մարդկային և հասարակական փոխհարաբերությունների ճիշտ ընկալման և տարանջատման տեսանկյուններից:

ՏՄԱԿ-ի հետ շարունակական համագործակցություն:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Գիտակ, հասարակական ակտիվ գործունեություն ունեցող ծնողական համայնք, սովորողներ, մանկավարժական համակազմ

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1. Նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները<br>2.Հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը<br>3.Համընդհանուր ներառական մոտեցում ցուցաբերել ԿԱՊԿՈՒ աշակերտներին<br>4.Ապահովել յուրաքանչյուր սովորողի կրթության մատչելիություն, հավասար մասնակցության հնարավորություն և կրթական ծրագրերի իրականացման որակի ,<br>5. Բացառել սովորող- սովորող, սովորող- ԿԱՊԿՈՒ սովորող սովորող- ուսուցիչ փոխհարաբերություններում հալածանքի, օտարման, բռնության /այդ թվում մեդիայի միջոցով/ իրագործման երևույթները, որոնք ճգնաժամային իրավիճակներ ստեղծելուց բացի, ազդում են ուսումնադաստիարակչական աշխատանքների բնականոն ընթացքի վրա<br>6.Կազմակերպել բաց դասեր, իրազեկիչ հանդիպումներ, որոնց ընթացքում աշակերտները մանրամասն կծանոթանան բուլինգի երևույթին:<br>7.Սովորողների մեջ ձևավորել պատշաճ վարքագիծ ու | Տնօրենություն<br>ուսուցչի օգնական<br>մանկավարժներ<br>դասղեկներ<br>ուսուցիչներ<br>աշակերտներ<br>մանկավարժներ<br>դասղեկներ<br>ուսուցչի օգնական<br>մանկավարժներ<br>աշակերտներ<br>մանկավարժներ<br>դասղեկներ<br><br>դասղեկներ | 2023- 28թթ | մարդկային ռեսուրս<br>վերապատրաստումներ<br>մարդկային ռեսուրս<br>մարդկային ռեսուրս<br>ՏՀՏ<br>ծրագրեր<br>գիտահանրամատչելի , ուսումնամեթոդական ,<br>գեղարվեստական գրականություն<br><br>դասղեկի ժամեր | Պետական բյուջե<br><br>ՏՄԱԿի միջոցներ<br><br>Պետական բյուջե<br><br>Պետական բյուջե<br><br>- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| վարվելակերպ, դաստիարակել հայրենասիրություն.<br>8. սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, թիմում աշխատելու, որոշումներ կայացնելու, ընդհանուր նպատակին հասնելու կարողունակություններ:<br>և ստեղծագործական, մասնակցայնության ունակություններ և հմտություններ: | ուսուցիչներ<br>ուսուցիչներ, դասղեկներ | | դասղեկի ժամեր<br>դասղեկի ժամեր | |

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Դպրոցում ներառական կրթության և հավասարության ապահովում: Դպրոցում ստեղծել ռեսուրսներ՝ աջակցելու ԿԱՊԿ ունեցող երեխաների սովորելուն, և ուսումնական միջավայրը հարմարեցնել նրանց կարիքներին: Դպրոցի աշխատակազմն արդիականացնում է իր գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում:

4(գերազանց)դպրոցում երաշխավորված են այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանությունը, ուսումնական գործընթացում բոլոր սովորողների ներառականությունը, ձևավորված է մասնակցային, սովորողների ինքնաարտահայման ու ինքնադրսևորման նպաստավոր միջավայր, խթանվում է ազգային և համամարդկային արժեքների համակարգը

3 ( լավ) դպրոցում այլակարծությունը սահմանափակող, սովորողների շահերն ու իրավունքները ոտնահարող դեպքեր հազվադեպ են գրանցվում, իրականցվում է արդյունավետ վերահսկողություն, առկա է սահմանափակ ներառական միջավայր

2 (բավարար) դպրոցում սահմանափակվում է այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանությունը նշանակալի արդյունք չի ապահովում, ձևավորված չէ ներառական միջավայր, ազգային և համամարդկային արժեքների մասին սովորողների պատկերացումները աղավաղված են

1 (անբավարար) բացակայում է դպրոցում ներառական և մասնակցային արժեքները, սովորողների շահերն ու իրավունքները պաշտպանված չեն, չկա համապատասխան մոտիվացիա

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ՝ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ՎԵՐԱՀՍԿՈՂ՝ ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ՝ ՈՒԴԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՆԳ

## 14.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչն իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին և դասավանդման նոր մեթոդներին ու

ռազմավարություններին ծանոթանալու հնարավորություն պիտի ստանա: Իմ խորին համոզմամբ ուսուցիչն իր մասնագիտական աճը պետք է ստանա դպրոցում՝ իր աշխատանքի ընթացքում: Դպրոցն ունի փորձառու ուսուցիչներ, մեթոդիստներ, և սա կարծես հարցին որոշակի լուծում է տալիս. նրանք կարող են սկսնակ և սակավափորձ ուսուցիչների համար վերապատրաստողներ լինել: Սա մասնագիտական զարգացման մի նոր որակ է, որ կարող են ապահովել այն ուսուցիչները, ովքեր ունեն՝

- ունկնդիրների վստահությունը շահելու համար անհրաժեշտ անցյալ և փորձ,
- կրթակարգի, չափորոշչի և ծրագրի բովանդակության լիարժեք իրազեկություն և հայեցակարգ,
- վերապատրաստողի հմտություն,
- մասնագիտական իրազեկություն, անձնային որակներ և մտածողության ճկունություն,
- նոր գաղափաներ ստեղծելու, կանխատեսելու, հիմնախնդիրը տեսնելու և այլ կարողություններ:

Այո՛, դժվար է ուսուցիչ լինել, առանց ավանդական հեղինակության և հարգանքի:

Ընթացիկ վերափոխումները դժվար կացության մեջ են դրել ուսուցիչներին՝ նրանց վերապահելով ժամանակակից մեթոդներով ուսուցման ամենապատասխանատու դերը:

Առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորման վերաբերյալ՝ պետք է ձգտել ուսուցիչների ուշադրությունը հրավիրել հենց այդ հարցի վրա, գործնականորեն ցույց տալ, օրինակներ նշել, թե այս կամ այն առաջադրանքով ու վարժություններով որոշակիորեն ինչ կարողություն ենք ցանկանում ձևավորել սովորողների մեջ:

Այս հարցը պիտի չանտեսվի նաև յուրաքանչյուր դասի նպատակները նշելիս ու ձևակերպելիս: Դրանք ընդհանուր բնույթ չպիտի ունենան, այլ խիստ որոշակի: Եվ եթե մենք ուզում ենք փոխել կրթության որակը ապա նախ պետք է բարձրացնենք մեր մասնագիտական որակը, գործի դնել ցանկացած միջոց, փնտրել ելքեր, օգտվել հնարավորություններից: Փորձառու ուսուցիչն իր փորձը փոխանցելով սկսնակ ուսուցիչներին, մեր փորձառուների փորձի փոխանակումը կազմակերպելով մենք կբարձրացնենք աշխատակազմի ընդհանուր որակը, իսկ փորձառու ուսուցիչները պետք է իրենց զգան գնահատված:

Կոչումներ,տարակարգ ունեցող ուսուցիչներ չկան:Չնայած ինքնակրթությամբ զբաղվում են աշխատակազմի 90 տոկոսը, բայց չեն գրվում ինքնակրթության պլաններ , գնահատման ռուբրիկներ; Մանկավարժական որոշ աշխատողների կառավարչական ոչ բարձր որակների պատճառով ցածր է նրանց մանկավարժական գործունեության արդյունավետությունը;Սկսնակ ուսուցիչների ոչ ակտիվ պատասխանատվություն, փոխադարձ դասալսումների և քննարկումների պակաս, Մ/Մ նորարարական ներուժի ոչ ամբողջական իրացում, ՏՀՏ թույլ տիապետողների առկայություն. սրանք են թույլ կողմերը:

ՆՊԱՏԱԿ

Ուսուցիչների ինքնակրթության, մասնագիտական հմտությունների զարգացում

ԽՆԴԻՐ

Շահագրգռել ուսուցիչներին վերապատրաստվել և ինքնազարգացմամբ զբաղվել

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Աշակերտակենտրոն մոտեցումներ, գնահատման նոր մոտեցումների կիրառում, նոր մեթոդների կիրառում, ուսուցիչների մասնակցություն տարբեր մրցութային և կատարելագործման ծրագրերին, հոգեբանական ծառայության զարգացում, մեդիագրագիտության բարձրացում:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետության կողմից կազմակերպվող և ֆինանսավորվող վերապատրաստումներ և ատեստացիա, ԿԶՆԱԿ հիմնադրամի, ՀԿ-ների կողմից կազմակերպվող վերապատրաստումներ, սոցցանցերում անհատների կողմից կազմակերպվող խորհրդատվություններ, վերապատրաստումներ, ինքնակրթություն:

ՌԻՍԿԵՐ

Ուսումնական և ֆիզիկական միջավայրի անբավարար առկայություն: Ուսուցչի իրավունքների ոտնահարում: Ուսուցչի կողմից անլուրջ վերաբերմունքը:

ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ

Խթանել ուսուցիչների որակավորման բարձրացման հնարավորությունները:

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1.Համագործակցել մենթոր դպրոցի հետ:Որոշել վերապատրաստումների ուղղությունները:Հրավիրել մասնագետ կամ առաջարկել ընտրել կազմակերպություն 2.Մշակել ուսուցիչների վերապատրաստման համակարգ՝ | տնօրենություն | 2023- 28թթ | վերապատրաստող կազմակերպություն ներ մասնագիտական | Պետական բյուջե ուսուցիչների անձնական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| հիմնված պարտադիր և կամավոր ատեստավորման կարգերի, ինչպես նաև ուսուցիչների անհատական կրթական կարիքների վրա:<br>3.Ապահովել ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին:<br>4.Մշակել ուսուցիչների ներքին գնահատման և խրախուսման ընթացակարգեր, խթանել դպրոցում մանկավարժների ստեղծագործական գործունեություն, նպաստել ուսուցիչների մեթոդական վարպետության կատարելագործմանը:<br>5.Համալրել ուսուցչական կազմը բարձրակարգ, նորարար, ստեղծագործ մասնագետներով:<br>6. Մանկավարժական աշխատողների համար ահմանել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված: | | | վերապատրաստումներ ուսուցիչների պարտադիր և կամավոր ատեստավորում ՏՀՏ սարքեր դասերի ամենօրյա պլանավորում շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում պետական և ոչ պետական գովասանք | միջոցներ<br><br>պետական և ոչ պետական կազմակերպությունների միջոցներ |

*ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ*

4 (գերազանց) անձնակազմի արժեքորումն ընկած է դպրոցի կառավարման հիմքում, անձնակազմի խրախուսումն իրականացվում է գնահատման չափանիշների բազմագործոն (աշխատողի ինքնակրթություն, մասնագիտական զարգացում, նախագծային աշխատանքների որակ, սովորողների գրանցած արդյունքները տարբեր մրցույթներում և այլն) համակարգի կիրառության հիման վրա խրախուսման համակարգը վայելում է անձնակազմի աջակցությունը, ձևավորված է անձնակազմի ինքնակրթության նպաստավոր միջավայր, անձնակազմն աչքի է ընկնում սեփական նախաձեռնություններով

3 (լավ) դպրոցը ստեղծել է բարենպաստ միջավայր, սակայն կա շահադրդման պակաս, սեփական նախաձեռնություններով հանդես գալու սահմանափակում

2 (բավարար) գնահատումը ներառում է սահմանափակ չափանիշներ, անձնակազմի անդամները ցանկություն ունեն ինքնակրթության, սակայն նպաստավոր պայմաններ չկան նպատակի իրականացման համար

1 (անբավարար) չկա ձևավորված համապատասխան միջավայր, խրախուսում չի իրականացվում, քանի որ դպրոցը չի ստեղծել նպաստավոր պայմաններ անձնակազմի ստեղծագործական աշխատանքի և ինքնակրթության համար

## 15. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցի մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Քանի որ դպրոցը հիմնական միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից, ապա հաջողությունների և դժվարությունների հիմնական պատճառը այդ միջոցների բավարար և անբավարար լինելն է: Դպրոցներն ֆինանսավորվել են աշակերտ-թվով և դպրոցի բյուջետային միջոցները բավարարել են, եթե աշակերտների թիվը դասարանում բարձր է եղել միջինից: Եթե այդ միջոցներն անբավարար են, ապա դպրոցը բյուջետային միջոցների հետ կապված իր խնդիր-ները փորձում է լուծել՝ որոշ ուղղություններում քիչ ներդրումներ կատարելով:

Միջոցների սղության դեպքում հիմնական ուղղություններով կատարվող բյուջետային հատկացումները սովորաբար նվազեցվում են խնայողությունների հաշվին: Հաճախ բյուջետային միջոցների սղություն առաջանում է բյուջեի սխալ պլանավորման պատճառով: Սխալ պլանավորման պատճառ է հանդիսանում սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում

ուսումնական պլանի և աշակերտ-թվով ֆինանսավորման վերահաշվարկով կատարվող փոփոխությունների սխալ կանխատեսումը: 2023 թվականի սեպտեմբերից դպրոցն անցել է դասարան-թիվ ֆինանսավորման: Դպրոցը ֆինանսավորումը ստանում է ամիս առ ամիս: Որպես կանոն այդ միջոցները ուղղվում են աշխատավարձի, եկամտահարկի, կոմունալ վճարների մուծմանը և միայն դրանից հետո՝ այլ ծախսերի: Եթե դպրոցը այդ վերջին ծախսերը կատարում է չպլանավորված ձևով՝ առանց հաշվի առնելու սպասվելիք մուտքերի չափը, ունենում է խնդիրներ աշխատավարձի, եկամտահարկի, կոմունալ վճարների ուղղությամբ, որը կարող է հանգեցնել կազմակերպական հետևանքների և վարչական պատասխանատվության:

Աշխատակազմի մասնագիտական վերապատրաստման նպատակով ամեն տարի նախատեսվում է որոշակի գումար, աշխատակիցների 20%ը հաշվի առնելով:

Ուսուցիչների աշխատավարձի դրույքաչափը ցածր է:

Դպրոցը ձեռնարկատիրական գործունեության ոչ մի տեսակ չի իրականացնում, բացի պետբյուջեի ֆինանսավորումից, օրենսդրությամբ չարգելված ոչ մի այլ աղբյուրից չի ֆինանսավորվում:

Դպրոցի կարիքները հոգալու համար անհրաժեշտ ենք համարում ծավալել ձեռնարկատիրական գործունեություն՝ որպես ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր: Այդպիսի աղբյուրներ կարող են լինել.

- Հիմնադրի սահմանած կարգով վճարովի կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված և կանոնադրությանը չհակասող գործունեությունից ստացված միջոցները,
- Տարածքների և գույքի վարձակալությունը,
- Բարեգործների նպատակային ներդրումները, նվիրատվությունները,
- Դպրոցի շրջանավարտների խորհուրդը, որը կնպաստի շրջանավարտների արդյունավետ և նպատակային մասնակցությունը դպրոցի խնդիրների լուծմանը.
- ՈՒսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում.
- Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՆՊԱՏԱԿ

Ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում և պլանավորում, Ֆինանսական այլընտրանքային միջոցների հոսքի ապահովում դեպի դպրոցաշինություն և կրթություն:

ԽՆԴԻՐ

Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրեր իրականացնելու համար: Մասնակցել կրթական ծրագրերի, որոնք ապահովում են ֆինանսական արդյունք

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՈՒսումնական և ֆիզիկական, հոգևոր և կրթական որակի բարձրացում

ՌԻՍԿԵՐԸ

Հովանավորների, ոչ պետական ֆինանսական ծրագրեր դպրոց մուտք բերող կազմակերպությունների հետ համագործակցության պակաս , Ֆորս մաժորային իրավիճակներ

ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրերի մասին քննարկումներ դպրոցում, համայնքում

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկատիրական գործունեություն

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԺԱՄԿԵՏ | ՄԻՋՈՑՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | ՖԻՆԱՆՍՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1.Մասնակցել կրթական ծրագրերի մրցույթների, որոնք ունեն ֆինանսական դրամաշնորհներ<br>2.Համայնքի մեծահարուստ նախկին շրջանավարտների հայացքը ուղղել դպրոցին<br>3 Հնարավորության դեպքում անել խնայողություններ | Տնօրենություն<br>տնօրենություն<br>աշխատակազմ համակարգող | 2023- 28թթ<br>2023- 28թթ<br>2023- 28թթ | ԿԳՄՍ, լիազոր մարմին, պետբյուջե, արտաբյուջե բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր, | դրամաշնորհայի ն կազմակերպությունների միջոցներ |

## 16.ԴՊՐՈՑ-ՀԱՄԱՅՆՔ ԿԱՊԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԿԱՐՕՐՅԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

Տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության խորացում

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

(գերազանց) մշտապես ձևավորված է ՏԻՄ-ի հետ հաղորդակցություն, ծնողական համայնքն ակտիվ ներգրավված է դպրոցի ուսումնադաստիարակչական համապատասխան գործընթացներում, առկա է այլ գործընկերների հետ համագործակցություն

3 (լավ) ՏԻՄ-ի հետ ձևավորված համագործակցություն առկա է, այլ գործընկերների հետ քիչ է պարբերականությունը, ծնողական համայնքի կողմից թույլ է համագործակցությունը

2 (բավարար) ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ համագործակցությունը զուտ պաշտոնական բնույթի է, ծնողական համայնքին դպրոցը ուսումնադաստիարակչական աշխատաքններում ներգրավում է մասնակի

1 (անբավարար) ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ հազվադեպ են համագործակցային աշխատանքները, դպրոցը չի կազմակերպում ծնողական համայնքի հետ ոչ մի տեսակ համագործակցություն

Դպրոցում երկարօրյա խմբեր չեն գործում:

1) տնային պայմաններում երեխայի կրթական աջակցության անհնարինության դեպքում՝ հաստատության ուսումնանյութական բազայի հիման վրա այդ գործընթացների կազմակերպումը, այդ թվում՝ այլ հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախող սովորողների համար,

2) արտադասարանական աշխատանքներին սովորողների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով երեխայի ստեղծագործական ընդունակությունների զարգացմանն անհրաժեշտ պայմանների ստեղծումը,

3) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, այդ թվում՝ ցածր առաջադիմությամբ, լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցելը:

Համաձայն նախագծի՝ դպրոցներում երկարօրյա խմբերը կազմակերպվում են սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա և համալրվում են՝ ըստ կրթական աստիճանի (տարրական և/կամ միջին դպրոց) կամ զուգահեռ դասարանների:

Երկարօրյա խմբում ընդգրկվելու համար տնօրենի և ծնողի միջև ընթացիկ ուսումնական տարվա համար կնքվում է երկարօրյա ուսուցման կազմակերպման պայմանագիր:

Երկարօրյա խմբի աշխատանքի կարգացուցակում նշվում են սովորողների դասապատրաստման, սննդի, հանգստի, ըստ անհրաժեշտության անհատական աշխատանքների, զբոսանքի, էքսկուրսիաների և խմբակներում ընդգրկված սովորողների անվանական կազմը, խմբակի աշխատանքի ժամերը, աշխատանքների իրականացման համար պատասխանատու մանկավարժական աշխատողների անունները:

Երկարօրյա խմբերում ընդգրկված սովորողների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների առավելագույն թիվը 25 է, փոքրաթիվ սովորողներով դպրոցների դեպքում՝ 15:

Սահմանված խտությունից պակաս խտությամբ խումբ կարող է բացվել դպրոցի ֆինանսական միջոցների, իսկ մասնակի կամ լրիվ վճարովի խմբերում ծնողների վճարումների հաշվին: Վճարի չափն ու վճարման եղանակը հաստատում է հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, իսկ ոչ պետական հաստատության դեպքում՝ հիմնադիրը:

Երկարօրյա խմբերում ընդգրկված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, այդ թվում՝ ցածր առաջադիմությամբ, ծառայությունների մատուցումը կազմակերպվում է պետական միջոցներով: Մյուս սովորողներին երկարօրյա ծառայությունների մատուցումը կարող է կազմակերպվել հաստատության ֆինանսական միջոցների կամ սովորողների ծնողների կատարած մասնակի կամ ամբողջական վճարումների հաշվին:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

Երկարօրյա խմբերի ձևավորում՝ վճարովի կամ մասնակի վճարովի:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4 (գերազանց) ստեղծված են պայմաններ սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների՝ մշակութային, գեղագիտական, ճանաչողական գիտելիքների զարգացման, ինչպես նաև, ֆիզիկական զարգացման, ռազմահայրենասիրական դաստիարակության բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը: Դպրոցում գործում է երկարօրյա ուսուցում՝ հիմնված ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա

3 ( լավ) սովորողների հետաքրքրությունների համար առտադպրոցական միջոցառումների հաճախականությունը քիչ է /միայն գարնանային և աշնանային արձակուրդներին/: Երկարօրյա ուսուցման պայմանները լիարժեք չեն

2 (բավարար) արտադպրոցական աշխատանքները դպրոցում կազմակերպվում են ոչ պարբերաբար: Երկարօրյա ուսուցման հնարավորությունները նվազագույն մակարդակի են

1 (անբավարար) սովորողների համար արտադպրոցական աշխատանքներ չեն կազմակերպվում և իրականացվում: Երկարօրյա ուսուցում չի իրականացվում:

## 17.ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱԼԱԾԱՆՔԻ, ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Դպրոցի կրթական միջավայրի առանցքային հոգեբանական բնութագիրն անվտանգությունն է: Դպրոցում հոգեբանական անվտանգ միջավայր ասելով հասկանում ենք փոխազդեցության այն միջավայրը, որն ազատ է հոգեբանական բռնության դրսևորումներից և ռեֆերենտային նշանակություն ունի աշակերտների համար: Այնտեղ գերակշռում է հումանիստական կողմնորոշումը (կարևորվում են և՛ սեփական, և՛ ուրիշների հետաքրքրությունները): Հոգեբանորեն անվտանգ կրթական միջավայրը դպրոցականների դրական անձնային աճի կարևորագույն պայման է, որը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա՝ պաշտպանել յուրաքանչյուր աշակերտի անձը, քիչ պաշտպանվածին լրացուցիչ աջակցություն ցուցաբերել ՝ զարգացնելով և իրացնելով նրա անհատական պոտենցիալը; բուլլինգի զոհ կարող է դառնալ ցանկացած երեխա, անկախ ֆիզիկական, ինտելեկտուալ կարողություններից կամ նյութական վիճակից: Հոգեբանական վնասներ ստանում են ոչ միայն մասնակիցները, այլ նաև դրա վկաները: Եթե գիտենք, որ դպրոցում առկա է բուլլինգ, ապա չի կարելի այն թողնել ինքնահոսի: Քննարկում ենք դա ուսուցիչների, ծնողների հետ, աշխատում ենք քայլեր և արդյունվետ լուծումներ գտնել: Խոսում ենք երեխայի հետ բուլլինգի մասին, աշխատում ենք զարգացնել հարգանք մյուս մարդկանց նկատմամբ, որպեսզի նա ինքը չդառնա ագրեսոր: Երեխային անվտանգ պահելու առաջին քայլը թե՛ առօրյա կյանքում, և թե՛ առցանց, համոզվելն է, որ նա գիտի՝ ինչ է բռնությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4 (գերազանց) դպրոցում մշտապես տիրում է առողջ, բարոյահոգեբանական մթնոլորտ, պարբերաբար իրավապահ մարմնի ներկայացուցիչները /անչափահասների տեսուչ/ հանդիպումներ են ունենում, սովորողները տեղեկացված են իրենց իրավունքներին և պարտականություններին, բռնության, հալածանքի և օտարման դեպքերը բացառված են դպրոցում

3 ( լավ) դպրոցում հալածանքի, օտարման, բռնության դեպքեր հազվադեպ են գրանցվում գրանցվում, իսկ գրանցման դեպքում ձեռնարկվում են համապատասխան աշխատանքներ

2 (բավարար) դպրոցում հալածքանքի, օտարման, բռնության դեպքեր պարբերաբար գրանցվում են, առկա չէ դրանց կանխարգելման համակարգված մոտեցում

1 (անբավարար) դպրոցում հալածանքի, օտարման, բռնության դեպքերի թիվը մեծ է, տիրում է անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտ

## 18.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատական գործընթաց է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները: Ցուցանիշներն ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշներն անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջտեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար: «Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը: Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատման մասնակիցներն են վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողներն ու ծնողները: Ուսումնական հաստատության

ներքին և արտաքին գնահատումն ուղղորդվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը: Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենարդյունավետ միջոցը հնգամյա ծրագրի հիմանվրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են՝ . դպրոցի խորհրդի կողմից տարեկան առնվազն 2 անգամ դպրոցի տվյալուստարվա համար ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացման քննարկումն ու համապատասխան գնահատականների ամրագրումը . դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը . համայնքի և դպրոցի այլ շահառուների շարունակական ներգրավումը դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին և այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին . զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից . յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների:

| № | Միջոցառում/ գործողություն | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրությունը | Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | | | |
| 2. | | | | | | | |
| 3. | | | | | | | |

# 19.ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

*Տնտեսության մեջ*

- կրթության իրականացում բարեկեցիկ, ընդարձակ՝ վերանորոգված, ամբողջովին կահավորված երկու մասնաշենքերում
- գրադարանը, ՏՀՏ կենտրոնը, բուֆետ-ճաշարանը, մանկավարժահոգեբանական կենտրոնը, մարզադահլիճը լինեն տեխնիկապես վերազինված և անհրաժեշտության դեպքում ծառայեն նաև համայնքին,
- քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներում, պատմության, կենսաբանության, աշխարհագրության, մաթեմատիկայի կաբինետներում լինեն անհրաժեշտ սարքավորումներ և միջոցներ:

*Մանկավարժական համակազմում*

- դպրոցի նորովի ղեկավարում և կառավարում, համագործակցային, բարեփոխումներին հետամուտ թիմային աշխատանքով,
- առաջիկա 5 տարիներին բոլոր ուսուցիչներն կամավոր ատեստավորմանը մասնակցած և անցողիկ շեմը հազթահարած լինեն,
- մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների և բովանդակության նորովի համակարգում,
- մանկավարժների մեթոդական մշակումների ապահովում,
- մանկավարժական հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում,
- ուսուցիչների կողմից դասապրոցեսին համակարգիչների օգտագործում,

*Աշակերտների համակազմում*

- դպրոցի աշակերտների առաջադիմության և որակի զգալի բարձրացում.

- քաղաքային և հանրապետական առարկայական օլիմպիադաներում աշակերտների մասնակցության թվի աճ,
- հանրապետական նշանակության տարբեր մրցույթներին ակտիվ մասնակցություն և մրցանակային տեղերի ապահովում,
- հետազոտական աշխատանքներում սովորողների մասնակցություն և աշխատանքների հրապարակում,
- դպրոցի աշակերտների շրջանում ներառական կրթության ավելի լայն ընդգրկում

***Դաստիարակության և արժեքային համակարգում***

- դպրոց–ծնողներ-համայնք համագործակցության առավել ակտիվացում՝ համապատասխան գործողությունների ծրագրի կազմումով,
- ծնողական և աշակերտական խորհուրդների համատեղ գործողությունների ծրագրով աշխատանք,
- աշակերտական խորհրդի լիազորությունների ընդլայնում՝ աշակերտական ինքնավարության պատասխանատվության մեծացում,
- համայնքի համար դառնալ կրթական հարցերով տեղեկատվական կենտրոն, խորհրդատվական ծառայությունների ապահովում մանկավարժահոգեբանական կենտրոնում և գրադարանում,
- Դպրոցի տեղեկատվական կենտրոնը տեղեկատվության ապահովումից բացի կդառնա հետազոտական կենտրոն՝ բոլոր շահառու կողմերի համար,
- օրենքի շրջանակներում դպրոցում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների ապահովում,
- մրցույթով շահած կրթական լրացուցիչ ծրագրերի կատարում և մանկավարժներին լրացուցիչ աշխատավարձով ապահովում,
- դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման նորագույն մոտեցումների կիրառում:
- կարգախոսային հայրենասիրությունից անցում գործնական հայրենասիրական դաստիարակության:

<u>Զարգացման ծրագիրը գործի դնելուց հետո լիահույս ենք և վստահ, որ ծրագիրը կնպաստի դպրոցի վարկանշային ցուցանիշի աճին,</u>

կրթության նոր , բարձր և ցանկալի մակարդակի հաղթահարմանը և կրթական համակարգի զարգացմանը։